


825
F - 29



1893

5318

82
F 29

Բ Ա Ռ Ի Ւ Ն

ՓԱՅԼՈՒՆ ԿՈՊԵԿ

Մանկական վեհպիկ

1893/9
1893/9

Թարգմանեցից

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴՎՈՂԵՍՆ

ԵՐԵՎԱՆ ՔՊԴՀՀ-ՆԵ-Ն.



Թիֆլիս.

Տպարան Մովսիսի Վարդանեան

Տիպ. Մ. Վարդանյանց, Ղազական պողոտա, Հանուն Վարդանյանց, Ղազական պողոտա, Հանուն

1893

1 - MAR 2013

921



ՓԱՅԼՈՒՆ ԿՈՊԵԿ

Մ ա ն կ ա կ ա ն վ է պ

Ա.

Дозволено цензурою. Тифлисъ, 8-го Июня. 1893 г.

ուցէ ընթերցողներիցս շատերը ոչինչ գաղափար չունին Ռօանդ Կօրտ թաղի եւ նրա թշուառ բնակիչների մասին։ Լօնդոնի խուլ փողոցներում այնպիսի գետնափոր տներ կան, որոնք բոլորովին զուրկ են լոյսից եւ մաքուր օդից։ Այդտեղի աղքատ բնակիչները շատ անմաքուր են ապրում։ Հարալ քրտինքով կամենալով իրանց օրական ապրուստը ճարելու, նրանք մեծ մասամբ գողութեամբ են պարապում։ Ամենայն օր ծեծը, հայհոյանքը, կռիւն անպակաս է այդտեղ։ Ահա այդ թաղը կոչում է Ռօանդ Կօրտ։

Ռօանդ Կօրտի մի խոնաւ եւ մութ գետնափոր տանը ծնուեցաւ Դիկ Նէյսօն մանուկը՝ մեր պատմութեան հերոար։ Նա այդտեղ ապրում էր եւ մեծանում մինչեւ տասներկու տարեկան հասակը։ Թէ ի՞նչպէս էր

նա ապրում, ի՞նչով էր կերակրում եւ ի՞նչ էր հագնում, դժուար է երեւակայել:

Նրա մայրն առաջ շատ աշխատասէր եւ բարի աղջիկ էր եւ ծառայում էր մի մանրավաճառի տանը, բայց յետոյ դժբաղդաբար պսակուեցաւ մի գինեմոլ մարդու հետ. պսակուելուց յետոյ մարդն այնպէս անձնատուր եղաւ արբեցութեանը, որ զրկուեցաւ իւր առաջուայ լաւ տեղից, եւ հետզետէ այնքան աղքատացաւ, որ հին շորեր, կօշիկներ, ոսկորներ, թղթի կտորներ հաւաքելով ու ծախսելով, հազիւ էր կարողանում մի կտոր հաց ճարել: Թէ եւ այս գործն էլ կարող էր շատ օգտաւէտ լինել, բայց թէ ինքը եւ թէ իւր կինն այնպէս սաստիկ հարբում էին, այնքան քիչ փող էին խնայում սեւ օրուայ համար, որ գրանք շատ հազիւ էին կարողանում ճաշել, եւ ինչ որ ձեռքն էր ընկնում, այն էին ուտում: Էլ ի՞նչ ասել կուզէ, որ տան սարդ ու կարգը շատ վատ էր Հայրն ամենեւին ուշը չէր դարձնում որդու վրայ, իսկ մայրը թէ եւ սաստիկ սիրում էր իւր երեխային, բայց գինեմոլութիւնը չէր թոյլ տալիս նրան իւր մայրական պարտաւորութիւնը կատարելու: Ա.հա այսպիսի տանն էր մեծանում մանուկը:

Դիկը շատ գեղեցիկ եւ ուրախ երեխայ էր, բայց նրան տեսնողն առանց ծիծալի չէր կարող նայել նրա վրայ: Խեղճին այն մաշած շորերն էին հագցնում, որ հայրը չէր կարողանում ծախել փողոցում, եւ ի հարկէ, որ շորը երեխայի վրայ լաւ չէր նստում: որովհետեւ

շատ անգամ այնպէս նեղ էր լինում, որ խեղճ երեխան քիչ էր մնում ճիւլուի, իսկ երբեմն այնքան լայն եւ մեծ, որ հազիւ կարողանում էր ման գալ: Բայց մանուկը շորի մասին ամենեւին չէր մտածում. անցորդներն էլ աւելի նրա սեւորակ աշխիներին ու սիրուն գանգրահեր գլխին էին նայում, քան թէ նրա շորին:

Դիկի մանկութեան առաջին տարիները շատ լաւ անցան: Հենց որ ման գալ սովորեց թէ չէ, նա, ի՞նչպէս եւ ամեն երեխայ, սկսեց ցեխից կարկանդակներ, լաւաշներ ու հողէ տներ շինել. ապա գնդախաղի ժամանակը հասաւ: Գնդախաղն էլ այնպէս են սիրում մանուկները, որ նրանցից ամենաաղքատն անգամ կարողանում է իւր համար գնդակ շինել. այնուհետեւ Դիկը դարձաւ փողոցի տղայ: Նա իւր ընկերների հետ ամբողջ օրերով փողոցներումն էր թափառում, եւ գեղեցիկ զարգարուած խանութների առաջեւ կանգնած՝ զարմանքով նայում էր սիրուն խաղալիկներին, կամ մրգավաճառի խանութի առաջ դարսած կարմրաթուշ խնձորներին ու դեղնագոյն նարինցներին նայելիս՝ բերանի ջուրն էր գնում: Եթէ Դիկի կամ որա ընկերների ձեռքը մի քանի կոպէկ էր ընկնում, այն ժամանակ էլ նրանց ուրախութեանը չափ չը կար: Իսկոյն վազում էին խանութ եւ առնում իրանց սիրած քաղցրաւէնիքը կամ թթուաշ նարինջը:

Բայց Դիկն ամենից շատ սիրում էր Կովէնտ Գարդէնի վաճառանոցը գնալ եւ ժամերով կանգնած նայել

Հիանալի ծաղիկներին, որոնց մանկութիւնից արդէն սիրում էր:

Այդ վաճառանոցում ծախում էին մրգեր, ընդեղններ ու ծաղիկներ: Դիկը համարեա ամեն օր այդտեղ էր անցկացնում իւր ժամանակը, այսպէս որ մըրգավաճառները նրան լաւ էին ճանաչում: Երբեմն մի նարինջ կամ մի խնձոր տալով՝ գործի էին ուղարկում նրան. իսկ եթէ երեկոյեան էին գործի ուղարկում, ընծայում էին նրան նաեւ թառամած ծաղիկների փնջեր: Նա սիրում էր այդ ծաղիկների փնջերը տուն տանել եւ դնել կոտրած ծաղկամանում, որ առաւօտը զարթնելիս՝ զմայլուի նրանցով:

Հենց այդ ժամանակ Կոլինտ Գարդէնի վաճառանոցի մօտ, մի փոքրիկ տնակում բնակւում էր ծերունի Թոմասը: Նա երիտասարդ հասակում ծառայում էր մի հարուստ պարոնի տանը, բայց երբ ծերացաւ՝ բարի պարոնը նշանակեց ծերունուն փոքրիկ թոշակ նրա հաւատարիմ ծառայութեան համար: Բացի սրանից, Թոմասը միշտ վաճառանոցումն էր լինում, եւ զանազան յանձնարարութիւններ կատարելով՝ բաւական փող էր աշխատում: Ծերունին մենակ էր ապրում: Նա մի քանի տարի առաջ զրկուել էր կնոջից, իսկ նրա միակ տասներկու տարեկան որդին մեռել էր ծաղկից:

Ծերունի Թոմասը միշտ վաճառանոցում լինելով, չէր կարող չը նկատել փոքրիկ Դիկին, որ շատ նման էր իւր մեռած որդուն: Բայց գուցէ ծերունին երբէք չէր խօսակցէր նրա հետ, եթէ չը պատահէր հետե-

ւեալ անցըը, որը կը պատմենք մեր ընթերցողներին: Մի երեկոյ մի մրգավաճառ կին կամենալով տուն գնալ, սկսեց խնձորները կողովը դարսել, բայց կողովը շուռ եկաւ եւ խնձորներն այս ու այն կողմը գլորուեցան: Դիկը շատ մօտ էր կանգնած եւ իսկոյն սկսեց օգնել կնոջը խնձորները հաւաքելով. խեղճ կինը շատ էր ափսոսում, որովհետեւ խնձորները շատ լաւ տեսակիցն էին եւ այդ պատճառով էլ շատ թանգ էր ծախում: Մի քանիսը գլորուեցան մեծ սեղանների ու քթոցների տակ եւ Դիկը մտաւ, որ հանէ: Խնձորները դուրս հանելիս, նա երեք խնձոր իւր մեծ գրպանը ձգեց: Թէեւ Դիկը չէր տեսնում, բայց նրանից շատ մօտ կանգնած էր Յոմասը: Ծերունին նկատեց, որ Դիկը խնձորները գրպանը ձգելուց առաջ իւր չորս կողմը նայեց, որ իմանայ թէ իրան արդեօք ոչ ոք չէ տեսնում: Ծերունին սկսեց հետեւել նրան. Նա տեսաւ, թէ ինչպէս մանուկը բերեց հաւաքած խնձորները կնոջը տուեց, ինչպէս կինը շնորհակալութիւն արաւ եւ բերած խնձորներից մէկն էլ երեխային ընծայեց:

Արդէն շատ ուշ էր եւ Թոմասը պիտի տուն գընար. բայց երբ երեխային միտն էր բերում, շատ էր վշտանում, մանաւանդ որ մանուկը շատ նման էր իւր մեռած որդուն: Ծերունին այսպէս էր մտածում: «Ես հաւատացած եմ, որ այս մանուկը բաղդի բերմունքին թողած այն թշուառ արարածներից մէկն է, որոնք չեն հասկանում, թէ ինչն է չարն եւ ինչն է բարին»: Նա չէր ուզում տեղն ու տեղը երեխային գողութեան մէջ

մեղադրել, բայց նոյն իսկ մանկան համար յշնասակար էր համարում նրա արարմունքն առանց ուշադրութեան թողնելու: «Ո՞վ է իմանում, ասում էր ծերունին, մանուկը կարող է գողութեանն ընտելանալ եւ վատ կը վերջացնի իւր կեանքը. ախր սուտ չէ ասած թէ «Զուի գողը՝ ձիու գող կը դառնայ». բայց եթէ հիմիկոց նախազգուշացնենք նրան, դրա պէս աշխոյժ մանուկը գուցէ դեռ կարողանայ բարի եւ աղնիւ մարդ դառնալ»:

Մինչդեռ Դիկն անուշ անուշ կծոտում էր մրգավաճառ կնոջից ստացած համեղ խնձորը եւ մտածում էր, թէ դեռ էլի երեք անգամ պէտք է նոյն բաւականութիւնն ունենայ, մի ձեռք դիսլաւ նրա ուսին. Դիկը վեր թռաւ եւ տեսաւ թումասին:

—Ես քեզ հետ խօսելիք ունիմ, մանուկ, ասաց ծերունին. արի գնանք իմ տուն, թէյ խմենք:

Դիկը նայեց ծերունու երեսին եւ տեսաւ, որ թէ եւ նրա ճակատը կնճիռներով էր ծածկուած, բայց շատ բարի տեսք ունէր: Մանուկը չը վախեցաւ եւ վստահ հետեւում էր նրան: Խեղճն այնքան ուշ ուշ էր արժանանում թէյ խմելու բաղդին, որ թէյի անունը լսելիս, բերանի ջուրը գնաց: Ճանապարհին ծերունին հարց ու փորձ էր անում երեխային, թէ որտեղ է բնակւում, ինչ է նրա անունը, ունի հայր եւ մայր եւ ինչով են պարապում, եւ Դիկը համարձակ պատասխանում էր ծերունուն: Այսպէս քաղցր զրոյց անելով՝ նրանք հասան ծերունու բնակարանը:

Թէ եւ ծերունու սենեակը շատ հասարակ էր սարգած, բայց Դիկը երբ իրանց աղքատիկ խրճիթը մտաքերեց, կարծեց թէ պալատումն է նստած:

Սենեակի մէջ տեղը գրած էր մի բոլորակ սեղան, իսկ մի ուրիշ քառակուսի սեղան գրած էր անկիւնում, որի վրայ դարսած էին մի քանի գրքեր. սենեակի միւս անկիւնում գրած էր փայտեայ մահճակալ, իսկ մահճակալի մօտի պատից կախ էր արած հին պարոնի ընծայած վագրի մորթին, որը ցերեկը զարդարում էր սենեակը, իսկ ձմեռուայ ցուրտ գիշերներին տաքացնում ծերունու սառած մարմինը:

Ծերունին նստեցրեց երեխային աթոռի վրայ, եւ տուեց նրան մի պատկերազարդ գիրք, որ նայելով ժամանակ անց կացնէ, իսկ ինքն սկսեց թէյ պատրաստել: Մանուկն աւելի նայում էր ծերունուն, քան պատկերներին:

Ծերունին առաջ կրակ վառեց, ապա պղնձեայ թէյամանով ջուր բերեց ու գրեց կրակի վրայ. յետոյ բացեց պահարանը, հանեց թէյամանը, երկու բաժակ, հաց եւ կարագ: Այս ամենը կարգին դարսելով, նա գնաց իւր տան մօտի խանութը եւ բերեց երկու կտոր տապակած միս, (այդ խանութում ամեն տեսակ ու տելիք ծախում էին): Երբ թէյամանով ջուրը եռ եկաւ, ծերունին թէյն ածեյ մէջը. տաքացրած խորովածի անուշահոտ բուրմունքով ամբողջ սենեակը լցուեցաւ: Դիկի բերանի ջուրը գնում էր եւ խեղճն անհամբեր սրտով սպասում էր, թէ երբ պէտք է թոյլ տան ու-

տելու։ Վերջապէս ծերունին ասաց. «Որդեակ, անուշ արա»։ Մանուկը կրկնել չը տուեց խնդիրը, իսկոյն մօտքաշեց աթոռը եւ երբ ուզում էր պատառը բերանը դնել, ծերունին ասաց նրան. «Կանգնի՛ր որդեակ, առաջ աղօթք անենք»։ Ծերունին սովորութիւն ունէր սեղան նստելուց առաջ միշտ աղօթելու։ Դիկը զարմացած նայում էր, թէ ի՞նչպէս ծերունին ջերմեռանդ աղօթում է։ Մանուկն իւր կեանքում այդպիսի բան չէր տեսել եւ այս շատ զբաղեցնում էր նրան։ Բայց համեղ խորովածը, կարագով հացն ու քաղցրահամ թէյլ շուտով ամեն բան մոռացնել տուին նրան։ Բարի տանտէրը ինքը շատ քիչ էր ուտում, միայն սասափկ ուրախանում էր, երբ տեսնում էր, որ իւր փոքրիկ հիւրը մեծ ախորժակով է ուտում։ Բարեսիրտ ծերունին վշտանում էր, որ շուտով պէտք է խօսէր մանկան հետ նրա գողութեան մասին։

Երբ թէյ խմեն աւարտեցին, մաքրասէր ծերունին իսկոյն լուաց բաժակները, ամանները, թէյամանը եւ ամենը դրեց իրեն տեղը. ապա դարձաւ երեխային այս խօսքերով.

— Որդեակ իմ, ես քեզ մի բան պէտք է ասեմ, որ քեզ համար շատ ծանր է լսել. դու գրապանումդ խնձորներ ունիս. այդ խնձորները դու գողացար մրգավաճառ կնոջից։ Դիկ, գողութիւնը վատ բան է, իսկ դու արդեօք գող չե՞ս»։

Փոքրիկ գողի գէմքը փոխուեցաւ, ականջներն ու այտերը կարմրեցան. նա շատ լաւ իմանում էր, որ գո-

ղերին սովորաբար սպասում է բանտը եւ արդէն սկսեց կասկածել, որ չը լինի թէ ծերունի Թոմասը շորը փոխած սստիկան է, եւ ուրեմն ինքն արդէն բռնուել է. բայց միեւնոյն ժամանակ մանուկը զարմանում էր, որ սստիկանը պատժելուց առաջ, այսպիսի քաղցր թէյ խմեցրեց իրան։ Ծերունին սպասում էր պատասխանի. իսկ երեխան ճարահատուած ուզում էր մի սուտ հնարել, որ կարողանար ազատուել ու ասաց, որ նոյն իսկ մրգավաճառ կինն էր ընծայել նրան խնձորը։

— Ոչ Դիկ. նա քեզ միայն մի խնձոր ընծայեց եւ այն էլ իսկոյն կերար։

Դիկը հետզհետէ աւելի շփոթուեցաւ եւ երբ իմացաւ, որ ծերունուն ամեն բան յայտնի է, սկսեց լալ ու աղաչել, որ իրան արձակէ։ Բարի ծերունին գրկեց մանկանը եւ ասաց, որ ինքն ամենեւին չէ ուզում ոչ պատժել, ոչ էլ մէկին յայտնել նրա գողութիւնը։ Եւ սրբելով երեխայի արտասունքները, շարունակեց. «Առ, որդեակ, թէեւ ես ոչ ոքի չեմ ասիլ, բայց Աստուած տեսաւ արարմունքը եւ նա կը պատժէ քեզ, եթէ չես ուղղուիլ»։

Թոմասը երկար բարակ խրատում էր երեխային եւ հասկացնում նրա վատ արարքը։ Կամաց կամաց զղջման արտասունքներ սկսան փայլիլ երեխայի աչքերում, որովհետեւ նրա անմեղ եւ քնքոյշ սիրուը դեռ բոլորովին չէր փչացել։ Նա հանեց գրալանից գողացած խնձորները եւ խնդրում էր ծերունուն վեր առնել։

— Դրանք իմս չեն, որդեակ, ասաց ծերունին. ես

ի՞նչպէս կարող եմ վերցնել:

— Ուրեմն ես դուրս կը ձգեմ պատուհանից,
ասաց Դիկը:

— Այդ էլ անկարելի է, ասաց Թոմասը. խնձոր-
ները քոնը չեն եւ դու իրաւունք չունիս դուրս ձգելու:

Դիկը շփոթուած, չէր իմանում ինչ անել:

— Ես կարծում եմ, որ դու պէտք է վերադարձ-
նես խնձորները մրգավաճառ կնոջը, ասաց ծերունին:
Ես գիտեմ, որ նա բարեսիրտ է, եւ գուցէ կը ների քեզ
քո յանցանքը: Եթէ յիրաւի վշտանում ես, որ գողա-
ցար, դու ուրախութեամբ կը վերադարձնես. խնձորներն
ինձ մօտ թող. վաղը կը գաս, եւ մենք միասին կերթանք
վաճառանոց եւ կը վերադարձնենք խնձորները մրգա-
վաճառ կնոջը:

Դիկը խոստացաւ միւս առաւօտը գալ եւ մըխի-
թարուած սրտով վերադարձաւ տուն, ճանապարհին
մտածելով ու զարմանալով իւր տեսածի ու լսածի վրայ:

Առաւօտը զարթնելիս, Դիկը տեսաւ պատուհանի
վրայ ծաղիկներ: Բայց նա այնքան շփոթուած էր, որ
այս անգամ չը կարողացաւ նրանցով զբազուիլ. խղճի
խայթն անդադար յիշեցնում էր նրան իւր երեկուան
արարմունքը: Եւ եթէ նա աղօթել գիտենար, գուցէ
իւր շփոթուած մտատանջութիւնն այս խօսքերով յայտ-
նէր.

«Տէր Աստուած, Դու որ ստեղծեցիր այս ծա-
ղիկները, օգնիր ինձ, որ ազնիւ մարդ գառնամ: Ես այլ
եւս չեմ ուզում գողանալ եւ սուտ խօսել»:

Թոմասը շատ ուրախացաւ, երբ միւս առաւօտ
սենեակը մնաւ Դիկը. ծերունին կասկածում էր, որ
մանուկ չի վերադարձնիլ խնձորները: Բայց Դիկի գալը
ցոյց էր տալիս, որ նա զզացել է իւր արածի վրայ եւ
եկել է պատիժ կրելու: Որովհետեւ շատ ծանր է մար-
դու համար գնալ եւ խոստովանել յանցանքը, թէ եւ
ազնիւ մարդն աւելի ծանրութիւն է զգում իւր սրր-
տում, որ չէ խոստովանել իւր չարութիւնը:

Մրգավաճառ կինը սաստիկ զարմացաւ, երբ Թո-
մասը մօտենալով նրա սեղանին յայտնեց, որ Դիկը կա-
մենում է վերադարձնել նրան այն երեք խնձորը, որ
երեկ գողացել էր: Խեղճ Դիկը մի խօսք անգամ չէր
կարողանում ասել, որովհետեւ սաստիկ վախենում էր.
թէ մրգավաճառ կինը կը պատժի նրան: Բայց կինը
ժպտալով պատառխանեց, թէ ինքը յոյս ունի, որ մա-
նուկն այլ եւս չի գողանալ եւ երբ կամենում էր գո-
ղացած խնձորներից մէկն էլ ընծայել երեխային, ծե-
րունին չը թողեց եւ շտապով հեռացրեց նրան այդտե-
ղից: Նա խխտ էր եւ չէր ուզում, որ անկեղծ խոս-
տովաճանութիւնը խնձորով վարձատրուի:

Երեկոյեան երբ կինը պատահեցաւ Թոմասին եւ
հարցրեց երեխայի մասին, ծերունին պատմեց բոլորը:

— Բայց միթէ մեծ մեղք է գործել խեղճ մա-
նուկն, ասաց կինը. պատահմամբ երեք խնձոր է գտել
եւ ձգել գրանը, ուրիշ խօսքին:

Ծերունին մի լաւ նայեց նրա երեսին եւ գլուխը
շարժելով, ասաց. «Խնդրեմ լաւ մտաքերիր, քոյրիկ, թէ

ինչու համար Ադամն ու Եւան դրախտից արտաքսուեցան. չէ որ միայն մի խնձորի համար, ուրիշ խօսքնչ: — է՛հ, ձեզ հետ ով կարող է վիճել, եւ ճշմարիտ, դուք այնքան կարդացած էք, որ այդպիսի բաներն ինձնից լաւ էք հասկանում:

Այս միջոցին մօտեցան սեղանին գնողները եւ կրտրեցին նրա խօսքը:

F



յն օրուանից Դիկն ու Թոմասը բարեկամացան. մանաւանդ Դիկի նման անտէր անտիրական մանկան համար թանգ էր ծերունու բարեկամութիւնը: Թոմասը յայտնեց երեխային, որ այսուհետեւ կարող է շուտ շուտ գալ իւր տուն. ծերունին գնեց նրա համար այբբենարան եւ սկսեց կարդալ սովորեցնել: Դիկն աշքաբաց եւ սրամիտ երեխայ էր եւ շուտով սովորեց տառեր գրել եւ բառեր կարդալ: Ծերունին գնեց նոյնպէս մի գեղագրութեան տետրակ: Դիկի թանաքոտ մատները պարզ ցոյց էին տալիս, որ աշակերտն ու ու-

սուցիչը մեծ եռանգով են աշխատում: Եւ որքան ուշրախացան երկուսն էլ, երբ Դիկը գեղեցիկ եւ անսխալ գրեց իւր ազգանունը իւր ընթերցարանի կազմի վրայ:

Բացի գրել կարդալուց, Դիկը սովորեց նոյնպէս լաւ վատից զանազանելը, որ երբէք չէր կարող իրանց տանը սովորել: Մանկան բաղդից ծնողները երբէք չէին հարցնում, թէ ուր է կորչում նա ամբողջ օրերով եւ ինչ է անում: Կիւրակի օրերը նա փոխանակ առաջուայ պէս փողոցներում թափառելու, Թոմասի հետ միասին եկեղեցի էր գնում:

Այսպիսով ժամանակն անցնում էր, Դիկը մեծանում եւ Թոմասը մտածում էր, թէ ինչ գործ ձարի նրա համար: Մանկան ապագան այնքան էր գրաւում բարի ծերունուն, որ մէկ անգամ անձամբ գնաց Ռօանդ Կօրտ խօսելու նրա ծնողների հետ. բայց դժբաղդաբար Դիկի ծնողներն այդ օրը հարբած էին, ուստի եւ չը կարողացան ծերունուն մի որոշ պատասխան տալ: Երբ ծերունին տեսաւ այս թշուառ ծնողներին, աւելի եւս ցաւեցաւ դժբաղդ մանկան վրայ: Նա չը գիտէր թէ երեխային ինչպէս օգնի. ինքն այնքան փող չունէր, որ իւր հաշուով պահէր երեխային, եւ մի այնպիսի բարերար էլ չէր ճանաչում, որ ինամէր եւ պահպանէր նրան: Նա խորհուրդ արաւ իւր տան տիկնոջ հետ, միայն սա էլ պատասխանեց, որ մանուկները շատ, ձանձրալի են եւ քանի փոքր են, վնասից աւելի ոչինչ օգուտ չեն տալիս»: Տանտիկինն ուղիղ էր ասում, որովհետեւ ինքն էլ երկու որդի ունէր, եւ չը գիտէր

թէ ի՞նչ անէր: Բայց եւ այնպէս, թումասը շարունակում էր սովորեցնել երեխային եւ ամեն կերպ աշխատում էր, որ մանուկը բարի եւ ազնիւ մարդ դառնայ:

Մի առաւօտ Դիկն աննպատակ ման էր գալիս Ստրանդ փողոցում իր ընկեր Լարկինզի հետո: Նրանք կանգնեցան մի գրախանութիւ առաջ եւ պատուհանից նայում էին պատկերազարդ գրքերին: Այս միջոցին խանութին մօտեցաւ մի ձիաւոր, որ չորս կողմն էր նայում, կարծես թէ ուզում էր գտնել մէկին որ իւր ձիու սանձը բռնէր, մինչեւ ինքը խանութից դուրս կը գար: Դիկը մօտ վազեց եւ յայտնեց որ ինքը կարող է ձիու սանձը բռնել: Պարոնը նայեց մանկան ուրախ դէմքին եւ տուեց նրան սանձն ասելով. «Դէհ, պըստլիկ, պահիր ձիս, մի վախենար, չի կծիլ»:

Պարոնը գրախանութում զանազան գրքեր էր ընտրում: Նա մի երկու անգամ գուրս նայեց, եւ տեսնելով որ Դիկը ամուր բռնած ունէր ձիու սանձը, ժապտալով ներս էր մտնում: Դիկը շատ հաւանեց պարոնի ուրախ եւ բարի դէմքը:

Երբ պարոնը գուրս եկաւ խանութից եւ ուզում էր ձի նստել, գրպանից հանեց թղթում փաթաթած սեւ փող եւ տալով Դիկին, ասաց. «Ա՛ռ պստլիկ, այդ էլ քո աշխատութեան վարձը, ես ըստ գիտեմ այդտեղ որքան է, բայց ինչքան շատ լինի, այնքան քեզ համար լաւ է»:

Հէնց որ պարոնը ձի նստաւ եւ ուզում էր հեռանալ, խանութից գուրս եկաւ գործակատարը եւ ինչ

որ հարցրեց: Պարոնը բարձրաձայն պատասխանեց. «Գրութենէր փողոց, № 5» եւ գնաց:

Դիկը շտապով բաց արաւ թուղթը եւ ապշած մը-նաց, երբ տեսաւ որ պղնձէ դրամների հետ մի ոսկի դրամ էլ կար:

Նա իւր կեանքում միայն երկու անգամ էր տեսնել ոսկի դրամ, այն էլ ձեռքին չէր բռնել: Նրա ընկեր Լարկինզն աղաղակեց.

— Օ՛հօ, պարոնը քեզ ոսկի դրամ է ընծայել. այքեզ բաղդ:

Դիկի ուրախութեանը չափ չը կար:

— Գիտե՞ս ինչ կայ, սատանի ճուտ, ասաց Լարկինզը, որը սրտով ուզում էր Դիկի հաշուով ճաշել. դու փողոցում շուտ շուտ մի երեւացնիլ այդ փողը, թէ չէ անցորդները կ'ասեն թէ գողացել ես. մեզ պէս աղքատ թշուառականներին ով է սեւցրել ոսկի դրամը. եւ մէկ էլ, գիտե՞ս ինչ կայ եղբայր, դու քո հօրն էլ չ'ասես, թէ այդպիսի բաղդի ես արժանացել, թէ չէ գլխիդ խփելով փողդ կառնի եւ օղիի կը տայ: Աստուած վկայ, ճիշդն եմ ասում:

Դիկն այլ եւս բան չասաց, փողերն առաջուան պէս փաթաթեց եւ գրպանը դրեց:

— Լսի՛ր, Դիկ, շարունակեց Լարկինզը, ի՞նչ ես կարծում, չը գնանք ամենից առաջ մօտիկ պանդոկը ճաշելու:

Այս խօսքերը լսելիս, քաղցած Դիկի ախորժակը բացուեցաւ. Նա թէ եւ գիտէր, որ շատ համեզ կը լինի

ՀՀ
363/9

խորոված միսը գետնախնձորով, բայց երբ մտածեց, որ այս փողերը իւրը չեն, խորն ալս քաշելով, ասաց.

— Զը կարծեմ որ պարոնը ցանկանար ինձ ոսկէ դրամ ընծայել. նա ասաց, որ թղթի մէջ միայն սեւ փող կայ, եւ ես հաւատացած եմ, որ նա չը գիտէր, թէ այն տեղ ոսկի էլ լինէր:

— Եթէ նա սխալուել է, ուրեմն քեզ համար աւելի լաւ: Էլ ի՞նչ ես մոլորուել, գնանք էլի՞:

Կար ժամանակ, որ Դիկն այսպիսի դիպուածում Լարկինդից աւելի լաւ չէր կարող դատել, բայց այժմ նա անազնւութիւն էր համարում ուրիշի ունեցածը սեփականել:

— Ես կը ցանկայի վերադարձնել պարոնին ոսկի դրամը, ասաց Դիկը: Եթէ այդ փողն ինձ մօտ պահեմ, միեւնոյն է թէ գողացել եմ:

— Ի՞նչ, վերադարձնել: Գժուել ես, ի՞նչ է, զարմացած աղաղակեց Լարկինդը, մանաւանդ որ սրտով էլ ցանկանայիր, չէիր կարող, որովհետեւ չը գիտես թէ պարոնը որտեղ է կենում:

— Ի՞նչպէս չը գիտեմ, պատասխանեց Դիկը. նա ի՞նչ որ հրամայեց ուղարկել իրան Գրօսվենէր փողոցը, № 5: Ուրեմն նա այնուեղ է կենում:

Լարկինդը սաստիկ անբաւական էր Դիկի յիմար դիտաւորութիւնից եւ տեսնելով, որ այլ եւս յոյս չըկայ համեղ ճաշ ուտելու, սկսեց ծաղրել նրան եւ հազար ու մի անպատիւ խօսք ասել, բայց ի զուր: Վերջապէս խեղճ Դիկն իւր անպիտան ընկերից ազատուելու հա-

մար գնաց Թոմասի մօտ, որից ուզում էր խորհուրդ հարցնել. բայց ծերունուն տանը չը գտաւ: Դիկը գնաց վաճառանոյ որոնելու նրան, բայց ծերունին այնտեղ էլ չէր:

— Ես հաստատ հաւատացած եմ, որ ծերունին կ'ասէր, թէ փողերը պէտք է վերադարձնել պարոնին. ուրեմն այս բոպէիս գնամ եւ վերադարձնեմ, ասաց մանուկն՝ ու գնաց:

Թէ եւ Դիկը լաւ էր ճանաչում Լօնդոնի փողոցները, բայց որովհետեւ քաղաքի արեւելեան կողմը շատ քիչ էր եղել, այդ պատճառով էլ հարց ու փորձ անելով, հազիւ կարողացաւ գտնել Գրօսվենէր փողոցը:

Երկար որոնելուց յետոյ, երբ վերջապէս տան №-ը գտաւ, քիչ մնաց զարմանքից խելքը գնար, այնքան մեծ եւ գեղեցիկ էր իւր փնտրած տունը: Դոները շատ գեղեցիկ եւ ամուր էին, իսկ զանգակն այնպէս բարձր էր շինած, որ երեխայի ձեռքը չը հասաւ նրան, որ հնչեցնէր: Նա չը գիտէր ի՞նչ անի. բայց վերջը մտածեց, թէ լաւ չէ, որ իւր նման ցնցոտիներ հագած աղքատն այդպիսի շքեղ տան դռանը կանգնի: Եւ ուրեմն աւելի լաւ կանէ, որ մեծ գունովը ներս մտնի: Այսպիսով երբ խոհանոցին հասաւ, նա սիրտ չէր անում բաղիւելու դուռը. վերջը մանուկը կամաց բաղխեց, բայց ոչ ոք չերեւաց: Մի փոքր յետոյ դարձեալ բաղիւեց, բայց աւելի սաստիկ. դուռը բացուեցաւ եւ նրա առաջ դուրս եկաւ մի աղջիկ ու հարցրեց, թէ ի՞նչ է ուզում:

— Ես յանկանում եմ տեսնել պարոնին. նա ասաց, որ այստեղ է բնակում, պատասխանեց Դիկը:

Աղջիկը զարմացաւ եւ մէկ էլ կրկնել տուեց խօսքը: Այժմ մանուկն աւելի պարզ էր խօսում. նա ասում էր, որ կամենում է տեսնել այն պարոնին, որը Ստրանդ փողոցում ձին պահելու համար փող էր բաշխել իրան:

Այս միջոցին պատշգամբի մօտով անցնող սպասաւորը լսելով այս խօսքերը, մօտեցաւ նրան եւ գոռալով ասաց.

— ՈՇ, դու, աւազակ. որովհետեւ պարոնը քեզ մի անգամ փող է բաշխել, դու եկել ես որ դարձեալ ինդրես: Աղքատները միշտ այդպէս աչքածակ են լինում:

— Ես փող խնդրելու չեմ եկել, վշտացած պատասխանեց Դիկը. ես եկայ որ նրան փող վերադարձնեմ:

— Մի՛թէ պարոնը քեզ հրամայեց, որ տուն գաս, հարցրեց սպասաւորը:

— ՈՇ, պատասխանեց մանուկը:

— Ուրեմն մի ուրիշը քեզ ուղարկեց:

— ՈՇ, կրկնեց Դիկը:

— Եւ դու դեռ ասում ես, որ եկել ես փող վերադարձնելու եւ ոչ թէ խնդրելու, գոռաց սպասաւորը: Դէ՛չ, անպիտան տղայ, ես քեզ խորհուրդ եմ տալիս, որ քանի բուրդդ դեռ չեմ գղել, հեռանաս այստեղից. թէ չէ տեսնում ես, ահա այնտեղ կանգնած է ոստի-

կանը. ես նրան իսկոյն կը յայտնեմ, թէ դու ինչու համար ես եկել:

Սպասաւորը բարկացած դուռը հրեց, իսկ աղախինը մտաւ խոհանոց եւ պատմեց միւս ծառաներին, որ մէկ ինչ որ պատառութուն շորերով երեխայ եկել էր, իբրեւ թէ պարոնին փող յանձնելու:

— Ի՞նչ ես ասում, սիրելիս, գողերը միշտ այդպէս են անում, ասաց պառաւ աղախինը. նրանք ամենից առաջ սովորեցնում են փոքրիկ մանուկներին մտնել հարուստ տներ, լաւ տնտղել գրանց դռները, պատուհանները, կողպէքները, որ յետոյ գան եւ պատմեն իրանց: Իսկ երբ գողերն ամեն բան լաւ իմացան, այնուհետեւ իրանք գիտեն թէ ի՞նչ գործիքներով կը գան եւ տունը կը կտրեն: Ո՞վ գիտէ, փոքրիկ տղան այժմ ամեն բան արդէն լաւ տեսաւ, որովհետեւ իմ լաւ միտս է, որ դա մի ժամ առաջ կանգնած էր մեր դռանը եւ ուշադրութեամբ իւր չորս կողմն էր նայում: Տէ՛ր Աստուած, ո՞վ գիտէ այս գիշեր գողերը գան եւ մեզ բոլորիս էլ սպանեն:

— Ո՞չ, ես սարսափում եմ, աղաղակեց Լուիզան, որ առանձին սենեակում մենակ էր քնում: մի՛թէ ճշմարիտ մեր տուն գողեր կը գան: Եթէ այդպէս է, ինձ որ միլիօն էլ տան, ես այս գիշեր իմ սենեակում չեմ քնիլ:

— Ա՛ռ հետ երկաթէ ունելին եւ մի վախենար, պատասխանեց պառաւը. իսկ եթէ գողն ինձ պատահի, վայ նրան, ես նրա գլուխը ջարդ ու փշուր կանեմ:

— Ուրեմն, եթէ այդպէս քաջասիրտ ես, սիրելիս, եկ այս գիշեր տեղերո փոխենք, աղերսում էր գունատուած Լուիզան։ Խեղճը ըլ գիտէր, որ պարծենկոտ պառաւը միայն խօսքով էր մեծ մեծ բրդում։ Եւ երբ Լուիզան խնդրեց, որ տեղերը փոխեն, պառաւը ըլ համաձայնուեցաւ, պատճառ բերելով, որ ինքն ուրիշ տեղում չէ կարող քնել։

Մինչդեռ այս խօսակցութեան անմեղ պատճառը կամաց կամաց հեռանում էր պարոնի տնից, յանկարծ մի ձիու ոտնաձայն լսեց եւ յետ նայելով, տեսաւ իւր ուզած պարոնին։ Դիկը ճանաչեց նրան եւ շատ ուրախացաւ, երբ ձիաւորը № 5-դ տան առաջ կանգնեց։ Պարոնն իջաւ ձիուց եւ հէնց ուզում էր տուն մտնել, որ մին էլ նրա աչքովն ընկաւ Դիկը. մանուկը ողջունում էր պարոնին եւ ամեն կերպ աշխատում նրա ուշքն իւր վրայ դարձնել։

— Օ՛չ, բարեւ, սիրելիս, բարեւ, ասաց պարոնը. կարծեմ դու հէնց այն տղան ես, որ իմ ձիս պահեց Ստրանդ փողոցում։

— Այո՛, պարոն, ես եկայ վերադարձնելու ոսկի դրամը, որ սխալմամբ տուել էիք ինձ պղնձէ դրամի տեղ։

Այս ասելով, մանուկը հանեց գրանից թղթէ փաթեթը եւ պարոնին տուեց։

— Անկարելի բան է, որ ես սեւ փողի հետ ոսկի դրամ տուած լինիմ քեզ, ասաց պարոն Զօնը եւ բաց սրաւ փաթեթը։

Փողերը տեսնելով, պարոնը ժպտաց, ոտից մինչեւ գլուխ մի լաւ նայեց Դիկին եւ ասաց.

— Եւ դու Էլ բերիր փողը, որովհետեւ կարծում էիր, թէ սխալմամբ ցանկացածից աւելի էի տուել քեզ։ Բայց դու ի՞նչպէս իմացար, թէ ես այստեղ եմ բնակւում։

— Ես լսեցի, երբ դուք խանութի գործակատարին պատուիրեցիք, որ ձեղ ուղարկելու իրեր Գրօսվենէր փողոցը, № 5-րդ տանը բերի. կարծելով թէ դուք անպատճառ այդ փողոցումն էք բնակւում, ուղղակի այստեղ եկայ։

— Դու բարի եւ աղնիւ երեխայ ես, ասաց պարոն Զօնը. թէպէտ փոքր ինչ սխալուեցար, որ նոր կտրած «Քայլուն կողէնը» խսկական ոսկի դրամի տեղ ընդունեցիր, բայց վնաս չունի։ Ասա խնդրեմ, դու երբեւիցէ տեսել ես խսկական ոսկէ դրամ։

— Մի երկու անգամ, պատասխանեց Դիկը. նրանք ճիշդ այդպէս էին, ինչպէս այդ կոպէկը։

— Զարմանալի չէ, բարեկամ, որ սխալուել ես. այդպիսի ժամանակ շատերը կարող են սխալուել։ Արի, գնանք մեր տուն եւ պատմիր ինձ, թէ ո՞վ սովորեցրեց քեզ այդպէս աղնիւ լինել։

Պարոն Զօնը տարաւ երեխային մի փոքրիկ սենեակ, եւ սկսեց նրան հարց ու փորձ անել։ Պարոնն արգէն յայտնի էր իւր բարեգործութիւններով. Դիկի արարմունքն աւելի եւս շարժեց նրա գութը։ Նա մեծ ուշադրութեամբ լսում էր, երբ Դիկը պատմում էր ծերունի Թոմասի

բարի գործերը։ Պարոն Զօնն ասաց Դիկին, որ թող
իւր կողմից խնդրի ծերունուն առաւտօտեան 10 ժամին
իւր մօտ գալու։ Եւ երբ Դիկը «մնաս բարեւն» էր ա-
սում, պարոն Զօնն ընծայեց երեխային յիսուն կոպէկ
եւ ասաց, որ այդպիսի ազնիւ երեխային երբէք չէ մո-
ռանալու։ Մանուկը լաւ չէր հասկանում, թէ ի՞նչ էին
նշանակում այս խօսքերը, բայց զգում էր, որ լաւ
բան պէտք է լինէին։ Նա այնպէս ուրախ սրբով էր
հեռանում պարոնի տնից, որ կարծես թէ աշխարհումս
իրենից բաղդաւոր մարդ չը կար։ Նա այնքան բան ու-
նէր պատմելու ծերունի Թոմասին, որ չէր իմանում,
թէ որտեղից սկսի։ Ծերունին շատ ուրախացաւ, երբ
իմացաւ, որ լաւ սովորութիւններն այնպէս արմատացել
էին Դիկի սրտում, որ նա արդէն չէր կարող գայթակ-
դուիլ ու ուրիշի ունեցածը իրան սեփականել։

Միւս առաւօտ շատ վաղ զարթեցաւ Թոմասը,
մաքրեց իւր կօշիկները, տօն օրուայ շորերն ու գլխար-
կը եւ գնաց Գրօսվենէր փողոցը։ Ծերունին վերջին ժա-
մանակները շատ հազիւ էր այցելում հարուստ տնիերը,
բայց երիտասարդ հասակում զանազան գործերով
միշտ հարուստների շքեղ պալատներումն էր լինում։

Պարոն Զօնը սիրով եւ յարգանքով ընդունեց պա-
տուելի ծերունուն, մանաւանդ որ մանուկն արդէն
բաւականին լաւ բաներ էր պատմել նրա մասին։ Թո-
մասը մի առ մի պատմեց պարոն Զօնին Դիկի ծնող-
ների թշուառ կացութիւնը, թէ ինչպէս խեղճ, անտէր
մանուկը վատ օրինակ էր առնում Ռօանդ Կօրտի պէս

ապականուած թաղում։ Ապա պատմեց, թէ ինչպէս
մանուկը սաստիկ սիրելով ծաղիկները, միշտ Կօլէնտ
Գարդէնի վաճառանոցումն էր ընկած, ուր ինքը պա-
տահմամբ ծանօթացել էր նրա հետ։

—Ես այժմ հասկանում եմ, ասաց պարոն Զօնը,
որ Դիկը միայն ձեզ է պարտական իւր ազնւութեամբ,
որ ստիպեց նրան վերադարձնել ինձ կարծեցեալ ոսկէ
դրամը։

—Ես ի՞նչ կարող էի անել, եթէ Աստուած Ջ
կամենար, ասաց համեստ ծերունին։ Աստուած է տուել
նրան քնքոյշ, բարի սիրտ ու ազնիւ հոգի։ Բայց այժմն,
քանի հոգիս բերանումն է, միայն մի բան եմ ցանկա-
նում, այն է՝ հանել թշուառ երեխային այն աւազակ-
ների որջից, ուր մարդիկ անազնիւ են, ուր տիրապե-
տում է զեղխութիւնն ու արբեցողութիւնը, ուր ծնող-
ներն ամենեւին հոգս չեն քաշում իրանց զաւակների
կրթութեան համար։

—Մանուկն այլ եւս այնտեղ չի մնալ, ազնիւ
բարեկամ, սիրտ տապով ասում էր պարոն Զօնը։ Նրա
մասին այժմէն իսկ կը հոգամ։ Մենք դարձեալ կը խօ-
սենք, եւ ինչպէս էլ որ չը կարգադրենք, կարծեմ որ
մանկան ծնողներն արգելք չեն լինիլ մեր կամքին։ Դո՛ք
ի՞նչ էք կարծում, ծերունի։

—Արգելք չեն լինիլ, պարոն, չէ, նրանք ամենեւին
ուշք չեն դարձնում մանկան վրայ եւ մինչեւ անգամ
ուրախ էլ կը լինէին, որ նրանից աղատուին։

—Բայց արդեօք կը ցանկանայ մանուկը պար-

տիղանութեամբ պարապել, ասաց պարոն Զօնը. կարծեմ դուք ասում էիք, որ նա շատ է սիրում ծաղիկներ։

—Այո՛, պարոն, նրա խելքը գնում է ծաղիկներից, ասաց ծերունին։ Երեկ, երբ դուք նրան վող էիք բաշխել, նա ամենից առաջ վաղել էր եւ գնել ինձ ընծայելու համար մի ծաղկամանով լվարդ։ Խեղճն ուզում էր ինձ այն բանով ուրախացնել, ինչ որ ամենից շատ ինքն է սիրում։ Հաւատացած եմ, որ նա լաւ պարտիզապան կը լինի։

—Մինչեւ այժմս, յարգելի ծերունի, դուք էք եղել մանկան միակ բարերարը. թող Աստուած ձեզ փոխարէնը հատուցանէ։ Այժմ ես եմ յանձն առնում նրան խնամելը եւ կ'աշխատեմ յաջողութեամբ աւարտել ձեր այդպէս լաւ սկսած գործը։ Յոյս ունիմ, որ դուք էլ կը համաձայնիք մոտագրութեանս հետ։ Եկող երկուշաբթի խնդրեմ շնորհ բերէք ինձ մօտ Դիկի հետ միասին։ Մինչեւ այդ ժամանակ յուսամ ամեն բան, ինչպէս հարկն է, կարգադրելու։

Պարոն Զօնն իւր խօսքի տէրն էր։ Երկուշաբթի օրը, երբ նշանակեալ ժամին թումասն ու Դիկն անցնում էին Գրօսլենէր փողոցով, ծերունին հարցրեց մանկանը.

—Դու կը ցանկայի՞ր պարտիզապան դառնալ։

Այս խօսքերը լսելով, այնպէս ուրախացաւ Դիկը, որ լեզուով չէր կարողանում իւր ուրախութիւնն ու համաձայնութիւնն արտայայտել։

—Իմ գիւղում ես մի հմուտ պարտիզապան ունիմ, ասաց պարոն Զօնը Դիկին. ես նրան արգէն գրել եմ քո մասին։ Թէ եւ նա մի քանի փոքրիկ տղաներ ունի, բայց կ'ուզենար դարձեալ մէկին էլ ընդունելու։ Ես ուզում եմ քեզ նրա մօտ ուղարկել, համաձայն ես։ Դու նրա տանը կ'ապրես, նրա կինը կը խնամէ քեզ, եւ եթէ քեզ լաւ կը պահես, այնտեղ քեզ համար շատ լաւ կը լինի, մանաւանդ որ այնտեղ դու ամեն կողմից շրջապատուած կը լինիս քո սիրելի ծաղիկներով, ժըպտալով ասաց պարոն Զօնը։

Այս ամենից յետոյ պարոն Զօնը թումասին վող տուեց Դիկի համար երկու ձեռք նոր շոր եւ ամեն հարկաւոր բաներն առնելու, եւ խնդրեց ծերունուն, որ մանկան ծնողների հետ էլ մի կերպ վերջացնի գործը։

Երկու շաբաթից յետոյ պարոն Զօնի ընտանիքը մեկնելու էր Լօնդոնից, եւ Դիկն ուրիշ ծառաների հետ միասին տանտէրերից առաջ պիտի ուղեւորուէր Դէնդամ Կօրտ՝ պարոնի կալուածքը։

Դիկը խօսք չէր գտնում իւր խորին շնորհակալութիւնն արտայայտելու. նրա սիրուը լցուած էր ուրախութեամբ, եւ մանաւանդ որ ինքն էլ չէր իմանում, թէ ինչպէս կարճ ժամանակում բոլորովին փոխուեցաւ գէպի լաւը։ Ծերունի թումասն իւր սիրելի սանիկից պակաս չէր ուրախացել այդպիսի բաղդաւորութեան համար, եւ պարոն Զօնին իւր խորին յարգանքն ու շնորհակալութիւնն էր մատուցանում։

Երբ նրանք դուրս եկան պարոն Զօնի տնից, ծե-

րունին ասաց երեխային.

—Դիկ, դու լիովին արդարացրի՛ր գեղագրութեան օրինակի այն խօսքերը, որը երեկ արտագրել էիր քո տեսրում: «Honesty is the best policy»- («Ազնւունը՝ ամենալաւ քաղաքավարութիւնն է»):



Անդրում եմ իմ ընթերդողներին Դիկի հետ միասին տեղափոխուել նրա նոր բնակարանը՝ Դէնգամ Կօրտ: Նրա ծնողների հետ պայմանը կապել էին, նոր շորերը գնել: Մանուկը նոր շորերը հագնելով, բոլորովին կերպարանափոխուեցաւ: Նա հագել էր սեւ մահուդի վերնազգեստ, սպիտակ մաքուր շապիկ եւ սեւ փողպատ: Նանալարհ ընկնելու օրը, երբ մանուկն առաջին անգամ այդպէս զուգուած, զարդարուած դուրս եկաւ իրանց տնակից, Բօանզ Կօրտի երեխաները շրջապատեցին նրան, կարծես թէ հրաշք էին տեսնում: Նրանցից մի քանիսն, ինչպէս օրինակ Լարկինզը, ծաղրում էին նրան ասելով. «0-, տեսէք,

տեսէք, Դիկը մեծ մարդ է դառել. այժմ էլ ով է կարող նրա հետ խօսել. հեռու կացէք, հեռու, ը դիպէք նրա շորերին»: Խեղճ Դիկը հագիւ կարողացաւ ազատուել նրանց ձեռքից եւ ուրախ ուրախ եկաւ Թումասի մօտ, որի հետ միասին Գրօալենէր փողոցը պիտի գնար:

Ծառաների համար պատրաստուած կառքն արդէն դռան մօտ էր. այդ կառքով պիտի գնային երկաթուղու կայարանը: Իրեղէնները դարսում էին աւագ սպասաւորի ներկայութեամբ, որը նոր եկողներին խնդրում էր առ ժամանակ խոհանոցը մտնել, ուր մնացած ծառաներն էլ հաւաքուած, ուրախ ուրախ պատրաստում էին ճանապարհ ընկնելու: Այդտեղ էր եւ աղախին Լուիզան, որը Դիկին առաջ գողի տեղ էր ընդունել, իսկ այժմ արդէն բոլորովին ուրիշ աչքով էր նայում մանկան վրայ: Տան բոլոր սպասաւորներին արդէն յայտնի էր «Փայլուն կապէն» պատմութիւնը:

Վերջապէս ամեն ինչ պատրաստ էր եւ Դիկին հրամայեցին կառք նստել: Խեղճ երեխայի համար շատ ծանր էր բաժանուել իւր բարեսիրտ եւ աղնիւ բարեկամից, որը նրա վրայ հօրիցն աւելի խնամք ունէր եւ որին անկեղծ սրտով սիրում էր: Իսկ բարեսիրտ ծերունին աւելի եւս վշտանում էր, որ բաժանուելու էր իւր սիրասուն սանիկից:

—Թո՞ղ Տէր Աստուածն օրհնէ քեզ, որդեակ, յուղուած եւ գողդոջուն ձայնով ասաց ծերունին. Երբէք չը մոռանաս քո երկնաւոր Հօրը եւ այս իմ վերջին

Խօսքը լաւ միտդ պահիր:

Կառքը շուտով հասաւ երկաթուղու կայարանը, նրանք նստան շոգեկառք. Հրամանը տրուեցաւ, մեքենան փրփրաց, հառաչեց եւ մի բոպէում Լօնդոնն անհետացաւ. Նրանց աչքից Նրա փոխանակ ճանապարհորդներին զմայլեցնում էին Անգլիայի կանաչագարդ գաշտերն ու արտօրայթը . . . : «Ո՞հ, Տէր իմ Աստուած, ինչ հրաշալի է, հազիւ բացականչեց Դիկը: Եւ ինչու այս ծառաները խօսում են միմեանց հետ եւ չեն նայում այս սքանչելի տեսարաններին, ասում էր ինքն իրան մանուկը: Կարծես թէ միայն Լուիզան էր համակրում Լօնդոնի թափառաշրջիկ երեխայի խնդութեանը: Լուիզան շատ բարի աղջիկ էր, եւ պատուհանի մօտ տեղ էր տուել Դիկին, որ նա աւելի լաւ կարողանար տեսնել գիւղերն ու արտերը: Երեկոյեան նրանք հասան մի իջեւան: Այդտեղ դրանց սպասում էր ճանապարհի մեծ կառքը: Նրանք նստան կառք եւ ուղեւորուեցան Դէնգամ: Դիկը նստեց կառապանի մօտ եւ այստեղից կարողանում էր ամեն բան տեսնել: Մի վերստչաափ ճանապարհ անցնելով, նա տեսաւ մի մեծ տուն, որ շինած էր մի հոյակապ պարտիզի մէջ: Այդ տունը պարոն Զօնի ապարանքն էր: Կառքը կանգնեց պարտիզանի փոքրիկ, գեղեցիկ տնակի առաջ. Դիկին հրամայեցին վայր իջնել կառքից, որովհետեւ նա բնակուելու էր պարտիզանի տանը:

Դրանց առաջն եկաւ պարտիզան Նէյլօրի մանկաչաս եւ գեղեցիկ կինը, սիրով ու յարգոնքով ողջունեց

ճանապարհորդներին եւ երբ կառքը հեռացաւ, նա բռնեց Դիկի ձեռքը եւ ժպտալով ասաց. «Կարելի է յոգնած եւ քաղցած ես սիրելիս, արի գնանք ներս, մի փոքր հանգստացիր»: Նրանք մտան տուն, ուր պատրաստ էր թէյի սեղանը: Պարտիզանի փոքրիկ տղաները շտապով ներս վազեցին սենեակը Լօնդոնից եկած երեխային տեսնելու: Ապա ներս մտաւ ինքը պարտիզան Նէյլօրը, որ մի բարձրահասակ, գեղեցիկ եւ ուշիմ տղամարդ էր: Նա հարց ու փորձ արաւ Դիկին, ասաց, որ բաւականին լաւ բաներ է պատմել նրա մասին պարոն Զօնը եւ թէ ինքն յոյս ունի, որ ինչպէս մինչեւ այսօր, այսուհետեւ էլ նոյնպէս ազնիւ եւ աշխատասէր երեխայ կը լինի:

Դիկը շատ քաղցած էր եւ մեծ ախորժակով խմեց հացով թէյր: Թէյն աւարտելուց յետոյ, պարտիզանուհին տարաւ Դիկին նրա համար պատրաստած սենեակը: Սենեակը թէեւ շատ փոքր էր, բայց շատ յարմար. Նրա պատուհանները ծաղկազարդ պարտիզին էին նայում: Երկար ճանապարհորդութիւնից սաստիկ յոգնել էր Դիկը: Նա պառկեց եւ քնեց քաղցր քնով:

Պարոն Զօնի կալուածքում շատ բանւորներ կային.
սրանք բոլորն էլ հետաքրքրութեամբ նայում էին Դի-
կին, մանաւանդ որ նա Լօնդոնիցն էր ուղարկուած եւ
նոյն իսկ պարտիզանի տանն էր բնակում:

Թէեւ Դէնգամը գեղեցիկ տեղ էր, բայց մանուկը
երբեմն շատ տիրում էր, որ մի սրտացաւ բարեկամ
չունէր: Պարոն Զօնն իւր ընտանիքով գնացել էր ծո-
վային ջրերը լողանալու եւ աշունքից վաղ չէր վերա-
դառնալու: Դիկն անհամբեր սրտով սպասում էր տես-
նելու բարեսիրտ պարոնին, որին շատ կարօտել էր եւ
որին հոգւով չափ երախտապարտ էր: Պարտիզում Դիկը
շատ բան չունէր անելու: Նա պէտք է ծառուղինե-
րում բսած խոտերը պոկոտէր, պարոնի տուն կանաչի
ու միրգ տանէր, եւ երբեմն էլ (որ շատ միրում էր)՝
վարդենի կամ որ եւ է ուրիշ ծաղիկ մէկ ծաղկամանից
միւսը տեղափոխէր: Նրա ամենասիրելի զբաղմունքներից
մէկն էր Նէլլօրի հետ միասին ծաղկանոց մտնելն ու
զմայլուիլը հիանալի ծաղիկներով: Պարտիզանն արդէն
հետզետէ համոզւմ էր, որ մանուկը շատ ընդունակ
է եւ թէ պարոն Զօնը շատ լաւ ընտրութիւն է արել:

— Դիկը շատ ընդունակ տղայ է, ասաց մէկ
անգամ Նէլլօրն իւր կնոջը. ոչ մի բան նրա աչքից չէ
թուզում, եւ հէնց մի որ եւ է բոյսի անուն տամ, դու
կարծում ես նա կը մոռանայ, — երբէք: Ի՞նչ ես ասում,
Աստուծու ողորմութիւն է այդպիսի սուր յիշողութիւն
ունենալլ:

— Նա շատ պատուական տղայ է, նկատեց կինը.

Պ.


Վ կարող է, ընթերցող, նկարագրել Լօն-
դոնի փողոցներում մեծացած տղայի ու-
րախութիւնը, երբ առաւօտը զարթնելիս, նա տեսաւ, որ
այս երազ չէր, այլ ճշմարիտ որ ինքը սիրուն ամառա-
նոցումն էր գտնւում: Նէլլօրի կինը շատ էր գովում
Դիկին, իսկ մարդն ասում էր, որ մանուկը գեռ շատ
փոքր է: «Նարկ ըս կար այնքան հեռու տեղից նրան
բերել այստեղ, բայց ի՞նչ արած, պարոն Զօնն այդպէս
կամեցաւ»: Սակայն պարտիզանը շատ զարմացաւ, երբ
տեսաւ որ մանուկը բաւականին վարժ գրում — կար-
գում էր, եւ գիտէր համարեա պարտիզի ու ծաղկոց-
ների բոլոր ծաղիկների անունները, մինչդեռ նրա տա-
րեկիցները մինչեւ անգամ չեն կարողանում արեւա-
ծաղիկն աւելուկից զանազանել: Պարտիզանն յետոյ
միայն իմացաւ, որ Դիկը համարեա իւր բոլոր ժամա-
նակը Կօլէնտ Գարդէնի հրապարակումն էր անց կացրել,
որտեղ եւ սովորել էր զանազան բանջարների ու ծա-
ղիկների անունները:

եւ այնպէս խոնարհ, որ ասել չի լինիլ։ Ո՞ւր կուզես,
ուղարկիր, կերթայ. եւ մեր փոքրիկները՝ նէդն ու
Տօմմին այնպէս սիրում են նրան, որ էլ չեն ուզում
մօտից հեռանալ։

Նէդն ու Տօմմին նէջլօրի որդիքն էին. սրանք սե-
ւորակ աշիկներով շատ ուրախ եւ աշխոյժ մանուկներ
էին, Դիկից մի քանի տարով փոքր։ Ցերեկուայ աշխա-
տանքներից յետոյ Դիկը կարկատում էր նրանց փուռա-
նը, նրանց համար սայլակներ էր շինում եւ ամեն կերպ
աշխատում էր բաւականութիւն տալ նրանց։

Երբ օրերն սկսեցին կարճանալ եւ ծառերի տե-
րեւները գեղնել, սպասաւորներին յայտնեցին, որ պա-
րոն Զօնն ընտանիքով վերադառնում է իւր կալուած-
քը։ Նա աւելի վաղ կը վերադառնար, եթէ ճանապար-
հին աղջիկներից մէկը չը հիւանդանար։ Բայց այժմ
արդէն վերադարձի օրը ճիշդ որոշուած էր, եւ
ինչպէս տանը, նոյնպէս էլ պարտիզում մեծ պատրաս-
տութիւններ էին լինում։ Դիկն եռանդով օգնում էր
ամենին. մի խոտ չը պէտք է բած լինէր ճեմելիներում,
մի աւելորդ տերեւ կամ ճիւղ—ածուներում։ Մէկ շարք
ծաղիկներ պէտք է տան սրահում գարսուէին, միւսները
ընդունարանում։ Հանդերձարանի մօտի ապակեայ սե-
նեակը շատ ընտիր եւ հազուագիւտ ծաղիկներով պէտք
էր զարդարել։ Դիկն այնքան ծաղիկներ էր կրել պարտի-
զից ու ծաղկանոցից, որ խեղճի կռները կտրտում էին,
բայց նա ամենեւին չէր գանդատուում։ Նա կարծես թէ
այքով ուտում էր հիւանալի, հազուագիւտ ծաղիկները,

որոնք հմուտ ձեռքով եւ ընտիր ճաշակով դասաւորուած՝
պարոնի ապարանքը անմահական դրախտ էին դարձել։
Երբ ամեն բան պատրաստ էր, նէջլօրը մի քանի
քայլ յետ գնաց, որ տեսնէր, թէ արդեօք ամեն ինչ
իւր ցանկացածի պէս կարգին է թէ ոչ. յանկարծ նա
ազքը ձգեց Դիկի վրայ եւ հիացաւ, երբ տեսաւ որ
մանկան դէմքը փայլում էր ուրախութեամբ այս տե-
սարանը գիտելիս։

—Դէհ, ասա, Դիկ, հաւանում ես, հարցրեց
պարտիզպանը։

—Ո՛հ, ի՞նչ հիւանալի է, ես երբէք չէի ճանձրա-
նալ սրա վրայ նայելուց, բերկրութեամբ պատասխանեց
ապագայ պարտիզպանը։

—Այս մանուկը ծնուած է պարտիզպան լինելու,
մտածում էր նէջլօրը։ Նա անպատճառ պէտք է լատի-
ներէն սովորի։ Ես այս բանը կը յայտնեմ պարոն Զօնին,
ասաց նա եւ գնաց տուն։ Պէտք է ասել, որ նէջլօրը
շատ ազնիւ մարդ էր եւ ամենեւին չէր նախանձում
Դիկին, չը նայելով որ նա ինքն էլ ուզում էր իւր որ-
դոցը պարտիզպանութեան համար պատրաստել։ Ինքը
նէջլօրը շատ հմաւտ եւ լաւ պարտիզպան էր. նա շուտ
իմացաւ, որ Դիկը շատ ընդունակ էր եւ առանձին ոէր
ունէր պարտիզպանութեան. նա մոքումը դրեց ան-
պատճառ օգնելու նրան։

Վերջապէս պարոն Զօնն իւր ընտանիքով վերա-
գարձաւ Դէնգամ Կօրտ։ Դիկը գուան առաջ կանգնած
սպասում էր հիւրերին, որ կառքի գոները բանայ, յու-

սալով որ պարոն Զօնը մի ուրախալի ժայիտ կը պարգեւէր իրան:

Նէյլօրը Դիկի մասին ամենալաւ կարծիքը յայտնեց: Պարոն Զօնը լիովին համաձայն էր Նէյլօրի հետ, որ անպատճառ հարկաւոր էր երեխային ուսում տալ:

Դէնգամում կար մի դպրոց, որի ուսուցիչը մի շատ լաւ կրթուած երիտասարդ էր: Պարոնը կարգադրեց, որ Դիկն առաւօտները դպրոց գնար, իսկ երեկոները բանէր պարտիզում: Ուսուցիչը համաձայնուեցաւ շաբաթը երեք անգամ լատիներէն լեզուի դասեր տալ նրան:

— Պարոն Զօնը չէ սիրում կիսատ գործ անել, ասում էր Նէյլօրի կինը. դու կը տեսնես, որ նա բոլորովին կ'ապահովէ այս մանկան ապագան:

— Պարոն Զօնը նրան ձանապարհ ցոյց կը տայ, եւ Դիկն այնպիսի մանուկներիցն է, որոնք գիտեն գէպերց օգուտ քաղել, ասաց Նէյլօրը:

Ժամանակն անցնում էր, Դիկը լաւ առաջ էր գնում եւ ուսուցիչը շատ գոհ էր նրանից: Շատերը նրան սիրում էին իսր ուրախ, պարզ բնութեան եւ խոնարհութեան համար: Պարոն Զօնին շատ էր գրաւում մանկան յառաջադիմութիւնը, իսկ նրա կինն ու աղջիկները շատ անգամ զրոյց էին անում մանկան հետ, որովհետեւ իմացել էին նրա Դէնգամ գալու պատմութիւնը: Բայց . . . ուր էլ որ չը գնանք, ինչպէս էլ որ չ'ապրենք, դարձեալ մեզնից ամեն մէկիս կեանքի մէջ սպասում է որ եւ է դժբաղդութիւն: Նոյնը պա-

տահեց Դիկին այնպիսի երջանիկ ապաստանարանումն անգամ՝ ինչպիսին էր Դէնգամ Կօրտը: Այս տան մէջ Դիկը թշնամի ունեցաւ:

Պարտիզում ծառայում էր մի մանուկ, Զօրջ Բէնտամ անոնով, որը Դիկին առաջին տեսնելուցն արդէն սկսեց նախանձել եւ ատել: Զօրջը տեսնում էր, որ Դիկը պարոն Զօնի եւ Նէյլօրի սիրելին է, եւ այս միայն բաւական էր յիմար եւ ինքնահաւան տղային գրգռելու: Նրա ասելով, իրան շատ համելի էր Դիկին «Հասանէլ», եւ իրաւ որ Զօրջը ոչ մէկ առիթ ձեռքից չէր թողնում մի վատ բան ասելու կամ մի որ եւ է անախորժ բան անելու: Զարմանալի է, թէ այդպիսի անպիտան մանուկը եթէ ուղենայ, որքան վատութիւն կարող է անել: Օրինակ՝ նա թագցնում էր պարտիզի հարկաւոր գործիքները, եւ երբ Դիկը զուր տեղը պտրելով ժամանակ էր կորցնում՝ Նէյլօրն էլ բարկանում էր նրա վրայ, այն ժամանակ Զօրջն արդէն երջանիկ էր համարում իրան:

Մի անգամ աշնանը, երբ Դիկը շատ մաքուր աւելեց գլխաւոր ձեմելիքը եւ գնաց աղբի ամանը բերելու, յետ գառնալով տեսաւ, որ բոլոր աղբը ցրուած է: Խեղճը ստիպուած պէտք է նորից աւելէր, այն ինչ նրան հրամայուած էր, որ 11 ժամին ամեն ինչ պատրաստ լինէր, որովհետեւ պարոն Զօնի կինը սովորութիւն ունէր հէնց այդ ժամին այս տերեւախիտ ձեմելիքով զբունելու: Որքան էլ խեղճ մանուկը չարչարուեցաւ, բայց դարձեալ չը կարողացաւ գործը ժամանակին աւսրտել, եւ ձեմելիքի վերջումը դեռ ցրուած էին

տերեւները, երբ տիրուհին իւր մէկ դստեր հետ արդէն երեւցաւ: Տիրուհին նկատեց այդ բանը եւ հրամայեց Դիկին, որ միւս օրուայ համար ճեմելիքը շատ մաքուր աւելած լինի, եւ նոյնը կրկնեց նէլլօրի առաջ: Պարտիզանը սաստիկ յանդիմանեց Դիկին, եւ ի հարկ է, չը հաւատաց, երբ խեղճ մանուկն հեկեկալով ուզում էր հաւատացնել, որ ինքը մաքուր աւելել է եւ հաւաքել, իսկ բանւորներից մէկը ցրուել է: Եւ ցաւն այն էր, որ Դիկը չէր կարող ոչ ոքի անունը տալ, թէեւ սրտով իմանում էր, թէ ովք արած կը լինի այս չար հանաքը: Մի ուրիշ անգամ էլ Դիկը իւր քարետախտակի վրայ մեծ չարչարանքով մի դժուար խնդիր էր լուծել: Նա ուսումնարան էր գնում, բայց որովհեաեւ գիրքը մոռացել էր, քարետախտակը վայր դրեց դռան մօտ եւ մոտաւ սենեակ գիրքը որոնելու: Նատ պտրտելուց յետոյ գտաւ գիրքը, վերցրեց քարետախտակը եւ գնաց ուսումնարան: Բայց ի՞նչպէս զարմացաւ խեղճ երեխան, երբ տեսաւ խնդրի վճիռը բոլորովին ջնջուած: Նա շատ վշտացաւ, բայց ի՞նչ կարող էր անել, եթէ ոչ պատմել ուսուցչին բոլորը եւ խնդրել, որ իրան թոյլ տայ վճռած խնդիրը միւս օրը ներկայացնելու: Ուսուցիչը շատ անգամ էր լսել այդպիսի արդարացնող պատճառներ, եւ սաստիկ յանդիմանեց Դիկին, որ շատ անկարգ է պահում իրան: Դիկը տեսնելով, որ ուսուցիչը չէ հաւատում, քիչ մնաց որ լաց լինէր: Մանուկը չէր կարող հաստատել, որ մեղաւորը Զօրջն է: Նա միշտ գիտէր, որ Զօրջը միշտ այդ ժամանակն էր գնում այն գիտէր, որ Զօրջը միշտ այդ ժամանակն էր գնում

նախաճաշելու, եւ այն էլ լաւ էր իմանում, որ նա միշտ պատրաստ էր իրան վնասելու:

Ծերունի Թոմասը չէր մոռանում իւր փոքրիկ բարեկամին, Դիկն էլ հոգւով չափ սիրում էր իւր բարերար ծերունուն: Ժամանակ առ ժամանակ նրանք միշտ անց նամակ էին գրում եւ այս նամակագրութիւնը մանկան յիշովութեան մէջ վառ էր պահում Թոմասի բարի խրամները: Բարեսիրտ պարոն Զօնը երբ Լօնդոն հասաւ, հրաւիրեց իւր մօտ ծերունուն եւ յայտնեց նրան, որ գլխաւոր պարտիզանը մեծ յոյս ունի Դիկից, որովհետեւ մանուկը շատ ընդունակ է:

—Կը ցանկայի տեսնել նրան երեւելի պարտիզան դարձած, ասաց ծերունին, բայց աւելի եւս կը ցանկայի, որ նա մինչեւ իւր մահը բարի եւ ազնիւ լինէր:

—Այդպէս էլ կը լինի, ասաց պարոն Զօնը, բայց ի՞նչպէս են նրա ծնողները:

—Առաջուանից աւելի վատ, պատասխանեց Թոմասը. մայրը շատ հարբելուց այնպէս ուժից ընկել է, որ այլ եւս յոյս չը կայ որ ապրի. իսկ հայրը համարեա միշտ հարբած է: Անցեալ օրը գնացել էի նրանց տուն, որ իրենց զաւակի մասին մի տեղեկութիւն տամ, բայց նրանք շատ անտարբեր էին դէպի իրենց որդու վիճակը եւ հազիւ մի քանի բան հարցրին նրա մասին:

—Ուրեմն աւելորդ է Դիկին Լօնդոն բերել տալ: Եթէ այդպէս է, աւելի լաւ է, որ մանուկը ծնողներից հեռու մնայ: Դուք ի՞նչ էք կարծում, յարգելի ծերունի:

Ես կարծում եմ, որ Յօանդ Կօրուը Դիկի տեղը
չէ, եւ որքան նա շուտ մոռանայ այդ թաղը, այնքան
լաւ: Ա. ինչպէս կուզենայի տեսնել երբ եւ իցէ Դիկին,
բայց այդ վոքր ինչ գժուար կը լինի: Ես արդէն մօտ
եօթանասան տարեկան եմ, թէ եւ դեռ առողջ եւ
ժիր, բայց մի ոտս արդէն գերեզմանումն է: Թող Տէր
Աստուածն օրհնէ ձեզ, ազնիւ պարոն, որ այդպէս հո-
գում էք մանկան մասին:

Ե.



ամարեա մի տարի էր անցել, ինչ որ ծե-
րունին ծանօթ էր Դիկի հետ: Գարունն
եկաւ եւ պարոն Զօնն իւր ընտանիքով պատրաստում
էր գնալու իւր կալուածքը՝ Դէնգամ Կօրտ:

Հրամանը տրուեցաւ եւ պարոն Զօնի սպասաւոր-
ներն, ինչպէս սովորութիւն էր, մի քանի օրով առաջ
դուրս եկան քաղաքից: Գուցէ ոչ ոք այնքան ուրախ
չէր պարոն Զօնի ընտանիքի գալուն, ինչպէս Դիկը: Նա
սիրում էր նայել, թէ ինչպէս տիրուհին ու իւր աղ-
ջիկները ման էին գալիս ձիով եւ իրան պատահելիս,

ուրախ ժալտալով ողջունում էին, մանաւանդ որ պա-
րոն Զօնը շատ էր գովում Դիկին, որովհետեւ Նէյլօրը
եւ գպրոցի ուսուցիչը միշտ լաւ կարծիք էին յայտնում
նրա մասին:

Այն օրը, երբ սպասաւորները կալուածքը պէտք
է գնային, պարտիզանի կինն ասաց Դիկին, որ նրանց
հետ միասին Լօնդոնից գալու է մի հիւր, եւ նա
պէտք է իւր սենեակը հիւրին տայ, իսկ ինքը տեղա-
փոխուի նրա զաւակների ննջարանը: Փոքրիկ նէդն ու
Տօմմին շատ ուրախացան, երբ լսեցին, որ Դիկն իրանց
հետ պէտք է պարկէր եւ հէքիաթներ պատմէր:

Երեկոն վրայ հասաւ եւ Դիկն անհամբերութեամբ
սպասում էր հիւրին, որ իմանայ թէ ով կը լինի: Կառ-
քը կանգնեց գրան առաջ եւ սպասաւորը գրկած դուրս
բերեց կառքից մի ծերունու: Զը նայելով որ ամառուան
խաղաղ եւ պարզ գիշեր էր, ծերունին շատ տաք էր
հագնուած: Պարտիզանուհին իսկոյն առաջ եկաւ հիւ-
րին ընդունելու, բայց հազիւ թէ կարող էր ողջունել
նրան, որ Դիկն արդէն փաթաթուել էր հիւրի վզովը:
Այդ հիւրը թումասն էր:

Պարոն Զօնը գիտմամբ առաջուց չէր յայտնել Դի-
կին, թէ ծերունի Թումասը միտք ունի Դէնգամ գալու,
որպէս զի անսպասելի տեսակցութիւնն աւելի ախորժելի
լինէր նրա համար: Ծերունուն բաւականութիւն պատ-
ճառելու համար պարոն Զօնը երկու շաբաթով հրաւի-
րել էր նրան իւր կալուածքը:

Ծերունին Դիկին բոլորովին վոխուած տեսաւ.

մանուկը մեծացել էր, լցուել, գեղեցկացել եւ այստեղ
աւելի առողջ էր, քան թէ Ռօանդ Կօրոսում:

—Խնդրեմ համեցէք, շատ ուրախ ենք, ողջունե-
լով ասաց պարտիզանուհին, ներս համեցէք. յոյս ու-
նիմ որ մեր տաճը ուրախ ժամանակ կանցկացնէք: Իսկ
Դիկը, ես հաւատացած եմ, որ ուրախութիւնից ողջ
գիշերը չի քնիլ:

Ահա այսպէս լաւ ընդունեցին ծերունուն, բայց
Նէյլօրի կնոջ խօսքը ըստ կատարուեցաւ: Դիկն այնպէս
լաւ էր քնած, որ առաւօտեան պարտիզանի որդիքը
թռան նրա անկողինը եւ ինչպէս իրանք ասում էին,
զանազան հանաքներ անելով, ուզում էին աւելի շուտ
զարթեցնել նրան:

Առաւօտը լուսացաւ թէ չէ, Դիկը հպարտ հպարտ
տարաւ իւր հին բարեկամին ցոյց տալու պարտէցն ու
ծաղկոցները, ո՞ր ծերունին այնպիսի հաղուագիւտ
ծաղիկներ ու պտուղներ տեսաւ, որ իւր կեանքում
տեսած չէր: Դիկին իրաւունք տուին, որ ամեն բան
ցոյց տայ իւր բարեկամին: Ամէն մէկ հիանալի ծաղիկ
ցոյց տալիս, նա միշտ ասում էր. «Ինչ որ յետոյ պէտք
է ցոյց տամ, այն աւելի լաւ կը լինի» Եւ ճշմարիտ որ
անկարելի էր նկարագրել ծերունու բերկրութիւնը, երբ
պարոն Զօնի կալուածքը տեսաւ: Նա եօթանասուն
տարեկան ծերունի էր եւ իւր կեանքում գեռ այդպիսի
հրաշալի կալուածք չէր տեսել:

Զ.



օտ մի ամիս էր անցել, եւ ծերունի
Թոմասը գեռ Դէնգամում հիւր էր:
Շատ անգամ կարելի էր տեսնել նրան պարտիզում,
գարեւոր կաղնիների տակ նստած գիրք կարդալիս:
Երբեմն պարոն Զօնը նստած նրա մօտ, ուշագրու-
թեամբ լսում էր փորձառու ծերունու իմաստուն խր-
ռատները: Թոմասն ասում էր, որ ինքը շուտով Լօնդոն
պէտք է գնայ, թէ եւ պարոն Զօնը խնդրում էր նրան
գեռ էլի մնալու:

—Բաւական է, որքան ձեր հիւրասիրութիւնը վա-
յելեցի, ազնիւ պարոն: Ես փափագս առայ եւ այժմ
հանգիստ սրտով ճանապարհ կընկնեմ: Թո՞ղ Աստուած
վարձատրէ ձեզ ծերուկիս ցոյց տուած սիրալիր հիւրն-
կալութեան համար:

—Կարելի է գուք աւելի սիրում էք Լօնդոնում
ապրել, մանաւանդ որ գուք այնպէս լնտելացել էք ձեր
խաղաղ բնակարանին:

—Ոչ, պարոն, ես գիտեմ որ այնտեղ աւելի սաս-
տիկ պիտի զգամ իմ միայնակցութիւնս, երբ յիշեմ

Ճեր հիւրընկալ առունը, ուր ամենքդ այնպէս սիրում էք ինձ եւ իմ սիրելի սանիկիս: Գիտեմ, որ զրկուած պիտի լինիմ այս դարեւոր կաղնիներից, այս հրաշալի ծաղիկներից ու երգող թռչունների դայլայլիկից: Ոչ, ազնիւ պարոն, Դէնգամը միակ տեղն է, ուր կը կամենայի զտուամեալ ոսկորներս հանգստացնել, բայց Աստուած այլապէս է տնօրինել: Ես պէտք է ապրեմ եւ մեռնեմ Լօնդոնում, մարդկային ունայն աղմուկի ու շփոթի մէջ:

Պարոն Զօնը մի քանի բոպէ լռելուց յետոյ, ասաց. «Ազնիւ բարեկամ: Ճը կայ աշխարհիս երեսին մի այնպիսի տեղ, ուր ձեզ մենակ զգայիք: Ճեր բարի սիրտը միշտ կը գտնէ մարդիկ, որոնց նուրիած կը լինի ձեր խնամքն ու սէրը: Բայց ասենք, թէ Աստուած իւր անսահման իմաստութեամբ այնպէս է տնօրինել, որ դուք տեղափոխուէիք մի ուրիշ նոր բնակարան, ուր ձեզ կը խնամեն հիւանդութեան ժամանակ, ուր ձեր կեանքի մնացած օրերը խաղաղ եւ հանգիստ կանցնէք, դուք արդեօք չէիք կատարիլ նրա սուրբ կամքը եւ չէիք ընդունիլ այն խաղաղ օթեւանը»:

—Ի հարկէ, ի հարկէ որ կընդունէի, բայց որովհետեւ այդ անկարելի է, այդ պատճառով էլ ես շնորհակալ եմ Աստուածանից եւ Լօնդոնում ունեցած փոքրիկ տնակիս համար, հանդարտ պատասխանեց ծերունին:

—Լսեցէք, բարեկամ, ասաց պարոն Զօնը: Ես հանեցի Դիկին Ռօանդ Կօրտի ապականեալ շրջանից եւ

իմ տանս ապաստան տուի նրան: Այժմ Նախախնամութիւնն ինձ կարողութիւն է շնորհում բարւոքել եւ քաղցրացնել ձեր ծերութեան վերջին տարիները: Ես կամենում եմ ձեզ աւելի յարմար բնակարան տալ, քան թէ ձեր Լօնդոնի բնակարանը: Ահա բան ինչումն է. ես մի փոքրիկ գիւղական տնակ ունիմ, ուր բնակեցրել եմ իմ նախկին հաւատարիմ պառաւ աղախնուս եւ նրա եղբօր աղջկան: Տնակն այնքան ընդարձակ է, որ պառաւը համաձայն է տալ ձեզ ննջարանը եւ մի փոքրիկ ընդունարան, եւ խոստանում է այնպէս ինամել ձեզ, որ ոչնչի կարօտութիւն ճը զգաք: Ես յանձս կառնեմ ձեզ համար բնակարանը պատրաստել, միայն դուք գնացէք Լօնդոն, հաւաքեցէք ձեր ունեցածը, վերջին «մնաս բարեւն» ասացէք ձեր հին տանը եւ ապա վերադարձէք մեզ մօտ: Մենք ուրախութեամբ կը սպասենք ձեր գալստեանը, իսկ դուք էլ կարող կը լինիք ամեն օր տեսնել ձեր սիրելի Դիկին»:

Թումասը լուռ էր. Նա մտածում էր՝ պարոն Զօնի առաջարկութեան վրայ եւ աեղարդ ծերունին ուրախանում էր, երբ մտածում էր, թէ ինքը պէտք է ապրի իւր սանիկի հետ, որին որդու պէս սիրել էր: Վերջապէս յուզուած, դողդոջուն ձայնով ասաց.

—Շնորհակալ եմ ձեզնից, ողորմած տէր իմ: Դուք չափազանց մեծ ուրախութիւն էք պատճառում խեղճ ծերուկիս. Ես թէ եւ ողջ կեանքս զանազան մարդոց բարերարութեամբ եմ ապրել, բայց ձեր այս վերջին բարերարութիւնը բոլորի պսակն է: Միայն խնդրում

եմ ձեզնից, ժամանակ տաք փոքր ինչ լաւ մտածելու,
երբ միայնակ կը մնամ, լաւ կը մտածեմ եւ ձեզ վըճ-
ռական պատասխան կը տամ:

Կարող էք հանգիստ սրտով մտածել, յարգելի
ծերունի, շտապելու ոչինչ չը կայ, ասաց պարոն Զօնը,
եւ տեսնելով որ ծերունին արդէն յոգնել է, բարեկա-
մաբար սեղմեց նրա ձեռքն ու հեռացաւ:

Ե.

 աւ մտածելուց յետոյ, Թումասը յայտնեց
Զօնին, որ խորին շնորհակալութեամբ է ըն-
դունում նրա առաջարկութիւնը: Պարոնը տարաւ ծե-
րունուն ցոյց տալու նրա բնակարանը եւ ծանօթացրեց
պառաւ Բէնսոնի հետ: Պառաւն ասաց, որ ինքն ու իւր
եղբօր աղջիկն ամեն կերպ կ'աշխատեն ծերունուն լաւ
պահպանել, իսկ ծերունին միշտ կրկնում էր: «ՈՇ. դուք
շատ բարի էք, քոյրիկ. ով կարող էր մտածել, որ զա-
ռամեալ հասակումս այսպիսի բաղդի կ'արժանանամ»:

Ծերունին ուղեւորուեցաւ Լօնդոն, հաւաքեց իւր
ունեցածը, եւ վերջին մնաս բարեւն ասաց Կօվէնտ

Գարդէնի ծանօթներին. նրանք շատ ափսոսացին, որ
ծերունին յաւիտեանս բաժանւում է իրանցից, բայց եւ
ուրախանում էին, որ լաւ բաղդն է ընկել: Տանտիկինը
ցաւում էր, որ զրկուում էր այնպիսի հանդարտ եւ
ազնիւ կինողից: Նրա սիրտը մորմոքուեցաւ, երբ տեսաւ
ծերունուն ճանապարհի շորերով կառքը նստած, որը
նրան շուտով երկաթուղու կայարանը պիտի հասցնէր:
Վերջին մնաս բարեւն ասելիս, պառաւը տուեց ծերու-
նուն հաց, պանիր եւ խորիշած միս, որ ճանապարհին
կերակրի նեղութիւն չը քաշէր:

Այժմ կարող ես իմանալ, ընթերցնել, թէ ինչ էր,
զգում Դիկը, երբ մտածում էր, որ իւր հին բարե-
կամը պէտք է միշտ Դէնգամում բնակուէր. նա ան-
համբեր սրտով սպասում էր այդ բաղդաւոր օրին:

Հոկտեմբերի վերջերին Թումասն եկաւ պառաւ Բէն-
սոնի տուն, ուր ամեն բան պատրաստ էր նրա ընդու-
նելութեան համար: Պարոն Զօնը ծերունու յետեւից
կառք էր ուղարկել երկաթուղու կայարանը: Դիկն ու-
րախ ուրախ ուղեկցում էր Թումասին գէպի նրա նոր
բնակարանը, ուր նրան վազուց սպասում էր տաք տաք
թէյը յատուկ նրա համար պատրաստած հիրասե-
նեակում:

Պառաւ Բէնսոնն ու իւր եղբօր աղջիկը ամեն կերպ
աշխատում էին, որ լաւ պատիւ տան ծերունուն: Բայց
ծերունին, որ սիրում էր ամեն բան իւր ձեռքով անել,
խնդրում էր, որ գոնէ այսուհետեւ այնքան նեղութիւն
չը քաշեն իւր համար:

Ծերունի Թոմասը շուտով ընտելացաւ իւր գիւղական նոր բնակարանին. այդտեղ նրա համար շատ լաւ էր. հարեւանները շատ յարգում էին բարի ծերունուն, որ պատրաստ էր ամբողջ օրերով նստել. եւ հսկել հիւանդ մանկան անկողնու մօտ, կամ լաւ գիրք կարգալով՝ քաղցրացնել համեստ գիւղականի հանգստութեան ժամերը:

Զօրջ Բէնտամը հասակն առնում էր, բայց չէր փոխում դէպի լաւը: Նա այնպէս վատ էր կատարում իւր պարտաւորութիւնները, որ նէլլօրը վազուց արդէն կարձակէր նրան, եթէ պարոն Զօնը չը լինէր, որ կարեկելով նրա թշուառ գրութեանը, խղճում էր եւ չէր արձակում, լաւ իմանալով, որ մանուկն ուրիշ տեղ ծառայելիս, չէր կարող այնպիսի ոռոճիկ ստանալ, որպիսին ինքն էր վճարում: Բայց թէ պարոն Զօնը եւ թէ նէջլօրն ամենեւին չը գիտէին, որ մանուկը նախանձում եւ ատում էր Դիկին: Եւ Դիկն այնքան բարի էր, որ իւր քաշած նեղութիւնների մասին ոչ ոքի չէր պատմում, բացի Թոմասից:

— Ես նրան երբէք վնաս չեմ տուել, ասաց մի անգամ Դիկը ծերունուն. իսկ նա միշտ աշխատում է ինձ վնասել: Ես էլ շատ համբերելուց յետոյ, վերջն այնպիսի բան կը բերեմ նրա գլուխը, որ յաւիտեանս չը մոռանայ:

— Համբերիր, սիրելիս, համբերիր, ընդհատեց նրան Թոմասը: Ես չեմ կարող այդպիսի խօսքեր լսել քեզանից. միթէ դու չես իմանում, որ այդ կը լինի «Ակն

ընդ ական եւ ատամն ընդ ատաման»: Զէ, սիրելիս, մեր երկնային Վարդապետն այդպէս չէր անում, երբ չարասիրտ մարդիկ աշխատում էին վնասել նրան: Նա ոչ թէ նրանցից վրէժինդիր էր լինում, բայց ընդ հակառակն՝ աղօթում էր նրանց համար: «Ներիր ուրիշին նրա յանցանքը, եւ կը ներուի քեզ քոնը», պատուիրում է Սուրբ գիրքը:

— Ո՞րքան կարող եմ, կաշխատեմ, ակամայ ասաց Դիկը, վշտացած ծերունու խօսքերից:

Ներիր նրան, սիրելիս, ներիր. ես շատ լաւ գիտեմ, որ այդ գժուար է անել, մարդս թոյլ արարած է, բայց դու ներիր Զօրջ Բէնտամին, եւ եթէ կարող ես, աշխատիր նրան բարութիւն անել: «Բարի արարէք ատելեաց ձերոց», յիշում ես թէ ով է սովորեցըել մեզ այս խօսքերը:

— Բայց ես ինչ լաւութիւն կարող եմ անել նրան, հարցըեց Դիկը. ես մինչեւ անգամ չեմ էլ մօտենում նրան: Ես նրան ոչինչ լաւութիւն չեմ կարող անել:

— Ինչու չէ, որդեակ. օրինակի համար եթէ նրան հարկաւոր լինի որ եւ է մարդու օգնութիւն, դու ինքդ կարող ես օգնել նրան:

Մինչդեռ նրանք այսպէս քաղցր զրոյց էին անում իրար հետ, արդէն միժնում էր եւ Դիկը պիտի տուն գնար. եւ երբ ուզում էր մնաս բարեւ ասել, Թոմասը նրա խօսքը կտրեց, ասելով.

— Մի փոքր էլ սպասիր, որդեակ, եւ ես քեզ կը պատմեմ մի գէպք, որից դու կ'իմանաս, թէ ինչ վատ

բան է վրէժ առնելը Այս պատմութիւնը կը սովորեցնի քեզ, թէ չը պէտք է ոչ ոքից վրէժ առնել: Թէեւ այս շատ տխուր դէպք է, բայց դու պէտք է լաւ լսես: Իսկ ես, մինչեւ անգամ այսքան տարիներից յետոյ էլ, առանց խղճահարութեան չեմ կարողանում յիշել այդ դէպքը:

Դիկը հանգիստ նստեց իւր տեղը:

—Երիտասարդ հասակումն ես շատ էի սիրում ձիաներ, շարունակեց ծերունին, եւ երբէք չէի հեռանում նրանցից: Հայրս ցանկանում էր, որ ես գիւղական վարժապետ դառնամ, եւ ճշմարիտն ասած, ես աւելի լաւ ուսում էի առել, քան թէ իմ հասակակից տղայըը: Բայց ես ուզում էի անպատճառ ձիապանդառնալ եւ ոչինչ բան չէր կարող արգելել ինձ կատարելու սրտիս ցանկութիւնը: Հայրս համաձայնեցաւ եւ յայտնեց այս բանը մի կալուածատիրոջ, որն ընդունեց ինձ իւր մօտ, իբրեւ կառապան: Կարճ ժամանակում ես այնպէս ընտելացայ, որ ամենափորձուած կառապանիցն էլ լաւ էի ձի նստում: բայց յանկարծ իմ տէրս մեռաւ եւ ես զրկուեցայ պաշտօնիցս ու վերադարձայ տուն: Այս միջոցին իմ ընկերակից եւ մեր հարեւան Զէյմս Բէննէտը նոյնպէս զրկուել էր իւր պաշտօնից եւ վերադարձել գիւղ: Նա էլ կառապան էր մի հարուստ պարոնի մօտ, եւ թողել էր պաշտօնը, որովհետեւ պարոնը գնացել էր օտար երկիր:

—Ողջ մեր մանկութիւնը Զէյմսի հետ միասին էինք անց կացրել, բայց վերջին երեք տարին ոչ մի տեղ չէինք տեսնուել, որովհետեւ Զէյմսը գնացել էր օտար

երկիր: Բայց այժմ մենք ամեն օր տեսնուում էինք իրար հետ:

—Մի անգամ եկաւ մեզ մօտ մեր հարեւանը եւ յայտնեց, որ մի պարոն, Անդերսօն անունով, ցանկանում է կառապան վարձել եւ խորհուրդ տուեց ինձ իսկոյն գնալ մօտը: Այդ միջոցին Զէյմս Բէննէտը նըստած էր մեզ մօտ. լսելով այդ խօսքերը, նա առանց ձայն հանելու, իսկոյն վեր կացաւ եւ գուրս գնաց: Ես շորերս փոխեցի եւ ոտով գնացի նիւտօնս Գոլլ փողոցը, ուր բնակւում էր Անդերսօնը: Ես իմացել էի, որ այդ պարոնը շատ լաւ մարդ է եւ այդ պատճառով աւելի եւս ցանկանում էի նրա մօտ ծառայել: Որովհետեւ նրա նախկին կառապանը նոր էր հրաժարուել, ես հաստատ հաւատացած էի, որ այն տեղն անպատճառ ինձ կը մնայ: Պարոն Անդերսօնը հաւանեց ինձ, բայց ասաց, որ հէնց իմ գնալույ մի քանի ըոպէ առաջ եկել է մի երիտասարդ եւ խնդրել կառապանի տեղը եւ ինքը նրան արդէն խօսք է տուել: «Նատ կարելի է, գուք նրան ճանաչում էք, ասաց նա. նրա անունն է Զէյմս Բէննէտ եւ նա էլ ձեր գիւղիցն է»:

—Այս խօսքերը լսելով, բոլոր մարմնով գողացի: Ես շփոթուած էի եւ զարմացած, մանաւանդ որ շատ լաւ հասկանում էի, թէ այս բոլորն ում արածն էր. Զէյմսը մեր տանը նստած լսում էր, երբ մեր հարեւանը պատմեց կառապանի մասին: Զէյմսն իսկոյն կամացուկ գուրս է գալիս տնից, լծում սայլակը եւ ինձնից առաջ համնում է պարոնի տուն:

—Ես հեռացայ պարոնի տնից բարկացած եւ զայրացած, ի սրտէ ատելով Զէյմսին նրա վատ արարմունքի համար։ Գալով գիւղը, ես ըս կարողացայ համբերել եւ լաւ անպատուեցի նրան։ Բէննէտը չէր կարողանում արդարանալ եւ բոլոր մեղը ձգում էր բաղդի ու պատահմունքի վրայ։

—Եւ այդպիսով, Զէյմսը մտաւ ծառայութիւն, իսկ ես նրա շնորհիւ ստիպուած էի պարապ ման գալ։ Ես կատաղում էի, երբ տեսնում էի, թէ ինչպէս այն անպիտանը պարոնի սեւաթոյր ձիանը հեծած՝ տանում էր աղբիւրը ջուր խմեցնելու։

—Անդերսօնը մի հիւանդ աղջիկ ունէր, որին բժիշկները խորհուրդ էին տուել ձիով ման գալ։ Հայրը գնել էր նրա համար մի հրաշալի արաբական ձի, բայց որովհետեւ նոր առած ձին խրտնում էր, ուստի դեռ եւս չէր կարելի հեծնել նրան։ Մեր գիւղի եւ Անդերսօնի կալուածքի մէջ տեղը, ճանապարհի մօտ, կար մէկ աւազան։ շատ մեծ դժուարութեամբ կարելի էր ստիպել ձիուն մօտենալ աւազանին։ Ի զ՞ուր տեղը Անդերսօնն ու նրա առաջուան կառապանն աշխատում էին ընտելացնել նրան ջրին, բայց չը կարողացան։ Զէյմսը խոստացաւ ուղղել ձիուն եւ վստահաբար սկսեց գործը։

—Ամեն օր Զէյմսը ձի հեծած ման էր գալիս եւ կամաց կամաց այնպէս ընտելացրեց նրան, որ ձին ամենեւին չէր խրտնում։ Ես տեղեկացայ, որ մէկ երկու օրից յետոյ ամենքը պէտք է գովին Զէյմսին, որ վեր-

ջապէս նրան յաջողել է ուղղել ձիու բոլոր պակասութիւնները։

—Այնուհետեւ բարկութիւնիցս էլ չէի իմանում թէ ինչ անեմ։ Անպատճառ կամենում էի, որ մի կերպով վրէժս առնեմ Զէյմսից։ Ես նախանձում էի, որ նա կարողացաւ ընտելացնել ձիուն, որովհետեւ լաւ գիտէի, որ ես նրանից պակաս ընդունակ չէի ձի հեծնելուն եւ հէնց այս միջոցին կարծես թէ չար ոգին ինձ դրդում էր, որ ժամանակն է լինասել իմ ատելի թշնամուն։ Ես գնեցի վառօդի մի քանի փամփուշտ, դրի գրպանս եւ Զէյմսի գալուց մի փոքր վաղ գնացի աւազանի մօտ։ Ես թագնուեցայ մի ցանկապատի ետեւ եւ հանեցի գրպանիցս վառօդի մի փամփուշտ։ Ես ուզում էի այնպէս խրտնացնել ձիուն, որ նա միշտ վախենար ջրից։ Այդպիսով, մտածում էի ես, Զէյմսի աշխատանքը զուր կանցնի եւ նա կընկնի Անդերսօնի աչքից։ Ես կպայ ցանկապատին այնպէս, որ ինձ ոչ ոք չը տեսնի։ Մի քանի րոպէից յետոյ ես լսեցի ձիու տրոփիւն։ Ձիաւորը Զէյմսն էր։ Առաջ նա մօտենում էր տրոփ տրոփ, ապա ոստ ոստ, վերջն՝ արագ։ Ձին ըոլորովին հանդարտ էր։ Եւ նա հազիւ թէ մօտեցել էր աւազանին, ես արձակեցի պատրաստի վառօդի փամփուշտը . . .։ Այստեղ ահա խեղճ կենդանին խրտնեցաւ եւ կանգնեց ետեւի ոտքերի վրայ։ ապա կարծես մի նետ կամ մրրիկ՝ անհետացաւ իմ աչքից։

—Այլ եւս ձիաւորը չէր երեւում, միայն օգում լաւում էր ձիու սաստիկ տրոփիւնը եւ ինչպէս երեւում

էր, գլուխը կորցրած ձիաւորը այլ եւս չէր կարողանում սանձահարել կատաղած կենդանուն:

—Աստծուն էլ յայտնի է, որ ես ամենեւին չէի ցանկանում Զէյմսի մահը. միայն իմ ցանկութիւնս այն էր, որ ձին առաջուան պէս վախենար ջրից. Ես կարծում էի, որ Զէյմսին ոչ մէկ դժբաղդութիւն չէր կարող պատահել. ես գիտէի, որ նա լաւ ձի հեծնող է, եւ յոյս ունենալով, որ նա ժամանակին կարող է սանձահարել ձիուն, հանգիստ սրտով գնացի տուն, ուրախանալով, որ վերջապէս կարողացայ վրէժս առնել իմ ատելի թշնամուց:

—Մենք վերջացնում էինք ճաշը, երբ ներս մոտաւ մեր հարեւանը եւ հարցրեց, թէ արդեօք նորութիւն չենք լսել. Նա պատմեց, որ Զէյմս Բէննէտը տարել է ձիուն ջուր խմեցնելու, թէ ձին խրտնել է եւ Զէյմսին վայր ձգել մի մեծ քարի վրայ, որ մարդիկ օգնութիւն են հասել եւ վեր են կացրել Զէյմսին բոլորովին ուշաթափ եւ կարծում են, որ նա երկար չի ապրիլ: Նրան տարել են մօտիկ գիւղական խրճիթը եւ բժիշկն էլ յոյս չունի, թէ նա կառողանայ: Դու ինքդ դատիր, սիրելի Դիկ, թէ որքան ծանր էր ինձ համար լսել հարեւանի պատմած տիսուր անցըը, որի պատճառը ես էի: Երբ իմացայ Զէյմսին պատահած դժբաղդութիւնը, կարծում էի թէ սպանութիւն եմ գործել: Ես սարսափեցայ, երբ մտածեցի, որ գործածս անարդ յանցանքը ընկերոջս մահուան պատճառ է դառնում:

—Ի հարկէ, ես բոլորովին հրաժարուեցայ այդ պաշտօնից, որով շատ զարմացրի պարոն Անդերսօնին:

բարմունքի մասին, մտածելով որ միեւնոյն է, դրանով հիւանդի տանջանքները չեն թեթեւանալ: Երեկոյեան ես շտափով գնացի այն գիւղական խրճիթն, ուր պարկած էր հիւանդը, իմանալու Զէյմսի առողջութիւնը: Ինձ ասացին, որ հիւանդն առաջուայ պէս դեռ ուշքի չէ եկել: Նրա ծնողներն էլ տիսուր տրտում նստած էին այնտեղ: Այդ ժամանակ եկաւ պարոն Անդերսօնը, որ իւր հետ բերել էր մի ուրիշ բժիշկ: Տեսնելով, որ հիւանդին լաւ են խնամում, ես մի փոքր հանդարտուեցայ:

—Միւս օրն հիւանդը թէեւ ուշքի եկաւ, բայց շատ թոյլ էր:

—Մէկ ամբողջ շաբաթ տանջուում էր խեղճը: Մի քանի օրից յետոյ բժիշկը յայտնեց, որ թէեւ հիւանդն աղատուեցաւ, բայց դեռ երկար ժամանակ անկարող կը լինի աշխատելու: Անդերսօնը այնքան բարի էր, որ յանձն առաւ վճարել Զէյմսի բոլոր ոռնիկը, մինչեւ նրա առողջանալը, բայց միեւնոյն ժամանակ յայտնեց, որ ստիպուած է այժմէն իսկ նրա տեղն ուրիշ կառապան վարձել, եւ այդ կառապանը ես էի լինելու:

—Ի հարկէ, ես բոլորովին հրաժարուեցայ այդ պաշտօնից, որով շատ զարմացրի պարոն Անդերսօնին: Այդ դժբաղդութիւնից յետոյ խիղճս այնքան տանջուում էր ինձ, որ բոլորովին մոքիցս հանեցի երբ եւ իցէ կառապան դառնալու: Մինչեւ անգամ ձի տեսնելիս, բոլոր մարմնովս դողում էի:

—Այս անցըից մի փոքր յետոյ ես մտայ ծառայելու մի պարոնի մօտ, որ երկու տարով պիտի ճանա-

պարհորդէր օտար երկիր։ Ես յոյս ունէի օտարութեան մէջ ամեն բան մոռացութեան տալու, բայց շատ սխալուեցայ։ Ես համոզուեցայ, թէ ո՞րքան անգութ եւ անազնիւ էր վարուել Զէյմսի հետ եւ այս միտքը տանչում էր եւ մինչեւ այժմ էլ տանջում է խիղճաւ։

—Այս բոլորը պատմեցի քեզ, որդեակ, նրա համար, որ քո մատաղ սրտից բոլորովին հանես վրէժ առնելու չար միտքը։ Այժմ գնա տուն։ թող Աստուած պահպանէ եւ ազատէ քեզ ամեն տեսակ փորձանքից ու չար մոքերից։

Ծերունին շատ յարմար ժամանակը պատմեց այս բանը, որովհետեւ Դիկը կրկին ստիպուած էր վրէժ առնել Զօրջից նրա վատ արարմունքի համար։

Ը.



օրջ Բէնտամը պարտաւոր էր ամեն երեկոյ նշանակած ժամին փակել ծաղկանոցի պատուհանները։ Նէյլօրը խստութեամբ պահանջում էր այդ։ Երկու անգամ Զօրջը մոռացել էր նշանակած ժամին փակել պատուհանները եւ այդ պատճառով էլ պարտիզանից խիստ յանդիմանութիւն էր ստացել։ Բայց երբ նոյնը կրկնուեցաւ երրորդ անգամ, Նէյլօրն

այդ գործը յանձնեց Դիկին, Զօրջի առաջ պարզ յայտնելով, որ այս բանում բոլորովին վստահ է նրա վրայ։ Զօրջը ոչինչ չասաց, բայց սրտով սաստիկ նախանձեց Դիկին։ Նա հեռացաւ, մտածելով թէ մէկ ի՞նչպիսի հնարք գտնի, որ նէյլօրի առաջ վայր ձգի Դիկի պատիւը։ Յարմար միջոցը ցուտով գտնուեցաւ։

Մի անգամ Դիկը, երբ նշանակած ժամին փակել էր պատուհանները եւ հանգիստ նստած թէյ էր խմում, շատ զարմացաւ, երբ յանկարծ Նէյլօրը յանդիմանեց նրան, թէ ծաղկանոյի պատուհանները չէ փակել։

—Հաւատացնում եմ ձեզ, որ բոլոր պատուհանները փակեցի, արդարանում էր խեղճ մանուկը։

—Կարելի է դու կամենում էիր փակել, բայց ըլ փակեցիր, ասաց Նէյլօրը։ Խնդրեմ մի արդարանար։ Աւելի լաւ է պարզ խոստովանիր եւ ասա, որ ուրիշ անգամ չես մոռանալ կատարելու իմ հրամանը. այն ժամանակ գոնէ ես հանգիստ կը լինիմ։

Դիկը լոեց։ Նա հաստատ հաւատացած էր, որ փակել է բոլոր պատուհանները եւ զարմանում էր, թէ ի՞նչպէս պատուհաններից մէկը բաց են տեսել։ Եւ նշանակած որ ճաշից յետոյ ոչ ոք չէր մօտեցել ծաղկանոցին։ Սովորաբար Դիկը երբ ծաղկանոցից դուրս էր գալիս, միշտ կողպում էր դուռը, բայց բանալին թողնում էր դուան վրայ, որպէս զի Նէյլօրը երեկոյեան տուն վերադառնալիս, վերցնէր հետը։ Վերջապէս մանուկն այն մոքին եկաւ, թէ գուցէ մոռացմամբ ծայրի պատուհանը բաց էր թողել։

Մի շաբաթից յետոյ օրերն սկսեցին ցրտել եւ Դիկին հրամայուեցաւ պատուհանները սովորականից աւելի վաղ փակել։ Նա ամենայն ճշգութեամբ կատարում էր հրամանը։

Մի երեկոյ տուն վերադառնալուց առաջ, Նէյլօրը ման եկաւ բոլոր ծաղկոցները եւ որովհետեւ ցրտերն արդէն վրայ էին հասել, այդ պատճառով էլ նա աւելի եռանդով էր խնամում ծառերն ու ծաղկները։

Երբ մօտեցաւ առաջին ծաղկանոցի դռանը, նա լսեց մի թեթեւ խշոց։ Բաց արաւ դռուը եւ ներս նայեց, միայն ոչինչ չը դանելով, կրկին փակեց դռուը եւ գնաց, կարծելով թէ խշոցը միայն իրան էր թւում։ Մի փոքր առաջ գնալով, Նէյլօրը տեսնում է, որ ծայրի պատուհանը բաց է։

—Դարձեալ, մտածեց նա. Դիկն էլ այնպիսի մոռացկոտ անպիտանն է եղել, ինչպէս եւ Զօրջը։ Այսուհետեւ նրա վրայ էլ չէ կարելի յուսալ։

Նէյլօրը փակեց պատուհանը. այս անգամ նա նորից լսեց առաջուան խշոցը. նա սկսեց ականջ դնել, բայց այլ եւս ոչինչ չէր լսում։ Վերադառնալով տուն՝ նա սաստիկ յանդիմանեց Դիկին, յայտնելով, որ նա այլ եւս թող նեղութիւն չը քաշի ծաղկանոցի պատուհանները փակելու, որովհետեւ զուր է, նա կատարելու չէր իւր հրամանը։ «Եթէ ես ինքս չը գնայի եւ իմ ձեռքովս չը փակեի պատուհանը, քո շնորհիւ ամենահազուագիւտ ծաղկներից մինը պէտք է վիշանար», աւելացրեց զայրացած պարտիզանը։

—Երդւում եմ, որ բոլոր պատուհաններն մի առ մի ես շատ ամուր փակեցի, բացականչեց Դիկը։ Ես պատրաստ եմ Աստուծու անունով երդուելու, որ ինձնից յետոյ մի ուրիշը գնացել եւ դիտմամբ բաց է արել։ Այդ ամենը չար մտքով են անում, որ ինձ վնասեն։

—Աւելորդ խօսքեր են, ասաց պարտիզանը, գուայդպիսով չես կարող արդարանալ։

—Ես արդարանալու համար չեմ ասում, բայց հաւատացնում եմ ձեզ, որ ամէն մէկ պատուհանը իմ ձեռքովս ամուր փակել եմ, չեկեկալով կրկնում էր մանուկը։

—Գուցէ դա ճշմարիտ է ասում, նկատեց Նէյլօրի կինը, որ որդու պէս սիրում էր Դիկին եւ ամեն բան հաւատում էր նրան։ Նատ կարելի է մէկը նրա հետ թշնամութիւն ունի եւ ուզում է վնասել նրան։

—Միթէ դու կարծում ես, որ թշնամինե՞ր էլ ունիս, հարցրեց Նէյլօրը։

—Այո, ես հաւատացած եմ որ ունիմ, պատասխանեց Դիկը։

—Ասա, ուրեմն, ով է այդ թշնամին։

Դիկը չը պատասխանեց. նա ոչ ոքի չէր ուզում մատնել, բայց փոքրիկ Տօմմին, որ եղբօր հետ նստած էր այնտեղ, աղաղակեց։

—Զօրջ Բէնտամն է նրա թշնամին, հայրիկ, երեկ նա ասում էր, որ սաստիկ ատում է Դիկին, որովհետեւ գու, հայրիկ, դրան սիրում ես եւ ծաղկոցների պատուհաններ փակելը դրան յանձնեցիր։

Մէկ ինչ որ միտք անցաւ այգեպանի գլխով. նա շտապով վեր կացաւ, վերցրեց վառած լապտերն ու առանց մի բառ ասելու, դուրս գնաց:

Նա մօտեցաւ ծաղկանոցին, բաց արաւ դուռը եւ ներս մտաւ: Նա նորից լսեց առաջուան թեթեւ խշոցը: Նէյլօրն այլ եւս չէր կասկածում, որ մէկը թագնուած էր այդտեղ եւ եռանդով սկսեց որոնել նրան: Ծաղկանոցը շատ մեծ էր, ուստի նա երկար ժամանակ պտրտում էր ամէն մի անկիւնը, բայց ոչ ոք չէր երեւում: Վերջապէս նէյլօրը բարձրացրեց լապտերը եւ նայեց պատից կպցրած երկայն տախտակներին: Տախտակների վրայ պարզ երեւում էր մարդկային մի մուժ պատկեր: Դա Զօրջ Բէնտամն էր: Նրա երեսի գոյնն այնպէս թռել էր, կարծես գետնից հանած մեռել լինէր: Առաջին կանչելուն պէս, նա մօտեցաւ նէյլօրին:

— Դու այստեղ ինչ ես շինում, որոտաձայն հարցրեց պարտիզանը:

— Ինձ այստեղ փակեցին, պատասխանեց նա դողալով:

— Իսկ ինչու էիր այստեղ մտել:

Զօրջը լուռ էր. նա ամբողջ մարմնով դողում էր:

— Եթէ դու չես ուզում ասել, ուրեմն ես կասեմ քեզ, շարունակեց պարտիզանը: Դու եկար պատուհանը բաց արի՞ր, որ ծաղկիները վնասուեն եւ այդ պատճառով ես Դիկին յանդիմանեմ նրա ծովութեան համար: Դու սրանով արդէն երկրորդ անգամն ես վնասում քո անմեղ ընկերոջը: Արի՞ ինձ հետ. պարոն

Զօնը քեզ կ'ասէ, թէ այդ քո վատ արարքը ինչի՞ արժանի է:

Պարոն Զօնի անունը լսելիս, Զօրջը աղիողորմ ձայնով գոռաց.

— Դուք ինքներդ պատժեցէք ինձ, թէկուզ սպանեցէք, մորթեցէք ինձ, բայց թէ Աստուած կը սիրէք, ինձ մի տանէք պարոն Զօնի մօտ, աղաջ՛ւմ եմ ձեզ:

Նէյլօրը անողոք էր. նա տարաւ Զօրջին ազնուականի մօտ:

Հեշտ է հասկանալ, թէ վեհանձն ազնուականն ինչպէս զայրացաւ, երբ իմացաւ թէ ինչ էր մանկան յանցանքը: Զօրջը խոստովանեց, որ Դիկը նրան ոչինչ վատութիւն չէ արել, բայց թէ ինքն անմիտ նախանձից դրդուած, ուզում էր վնասել նրան:

Պարոն Զօնն այնպիսի պայծառ գոյներով նկարագրեց Զօրջի յանցանքը, որ այդ տխուր օրուայ յիշատակն անջնջելի մնաց նրա սրտում:

Դիկն ուրախացաւ, երբ լսեց որ ամենքին յայտնի եղաւ, թէ ոչ էր ծաղկանոցի պատուհան բաց անողութեաց պէտք է ասել, որ ազնուասիրտ Դիկը հոգւով ցաւում էր, որ Զօրջը զրկուեցաւ իւր պաշտօնից: Դիկը կամենում էր ինդրել նէյլօրից, որ նորից ընդունել տար Զօրջին, բայց գիտէր որ իւր խնդիրն ի զուր էր: Պարոն Զօնն ու գլխաւոր պարտիզանը սաստիկ զայրացած էին: Սակայն մի քանի ժամանակից յետոյ, երբ ամենքը հանդարտուեցան, եւ Դիկը տեսնում էր, որ Զօրջն անգործ թափառում է եւ ամենքը ծաղրում են

Նրան իւր կատարարմունքի համար, նա այնպէս խըզ-
ճաց նրա վրայ, որ այլ եւս չը համբերելով, վերջա-
պէս սիրտ առաւ եւ խնդրեց Նէյլօրից, որ սա միջնորդէ
պարոն Զօնի մօտ կրկին ընդունելու Զօրջին:

— Դու նրա համար ես խնդրում, անմիտ պատա-
նի, հարցրեց պարտիզանը:

Բայց չը նայելով այս անխելքութեանը, ինչպէս
ասում էր Նէյլօրը, նա այնու ամենայնիւ գնահատեց
Դիկի բարեսրտութիւնը եւ կատարեց նրա խնդիրը, ա-
ղերսելով պարոն Զօնին, որ կրկին ընդունէ Զօրջին:
Նէյլօրը յայտնեց Զօրջին, որ նրա ընդունուելու միակ
պատճառը՝ Դիկին էր:

Զօրջ Բէնտամն իրեն պատահած դժբաղդութեան
օրից սկսած, միշտ խուսափում էր Դիկից. բայց երբ
խմացաւ նրա վեհանձն արարքը, բոլորովին փոխուեցաւ
եւ հազար անգամ շնորհակալութիւն էր անում Դի-
կին, յայտնելով որ շատ ցաւում է եւ զդիում իւր ան-
պիտան արարմունքի համար: Այդ օրուանից երկու պա-
տանիներն ամենամերիմ բարեկամներ դարձան: Զօրջը
միշտ մտածում էր, թէ ի՞նչ անի, որ օգտակար լինի
Դիկին: Այդ օրուանից սկսած Զօրջ Բէնտամն աշխա-
տում էր բարի եւ ազնիւ մարդ դառնալ:

Ժ.



Ենք լուռթեամբ պէտք է անցնենք Դիկի
կեանքի մնացած տարիները, կ'ասենք
միայն, որ նա արդարացրեց բարեկամների իւր վրայ
դրած յօյսերը: Դիկը պատիզպանութեան մէջ կատա-
րելագործուեցաւ, եւ ընտելացաւ այնպիսի գեղեցիկ ու
կանոնաւոր պարտէզներ շինելուն, որոնք միայն Անգ-
լիայումն են լինում: Պարոն Զօնն ու Նէյլօրը խորհուրդ-
էին տալիս նրան յատկապէս պարտիզպանութեամբ պա-
րապելու եւ ամեն կերպ օգնում էին այս աշխատասէր
ու շնորհակի երիտասարդին:

Երբ նա շատ լաւ սովորեց պարտիզպանութեան
արուեստը, պարոն Զօնը ծանօթացրեց նրան իրան ծա-
նօթ մեծատունների հետ եւ ազնուամիտ ու ջանասէր
երիտասարդը բարեխղճաբար ու եռանդով աշխատելով
ձեռք բերեց բարի անուն եւ ապահով կեանք եւ այս
բոլորը մի «Փայլուն է ու է ի ի» շնորհիւ:

Ծերունի Թոմասի ուրախութեանը չափ չը կար:
Նա այնքան ապրեց, մինչեւ որ Դիկը պատասխանաւ,

տուն ու տեղի տէր դարձաւ եւ այն ազնիւ ու իմաստուն խրատներին էր հետեւում, որ փոքրուց սովորեցրել էր նրան պատկառելի ծերունին:

Թոմասը հասաւ մինչեւ խորին ծերութեան եւ նրա մահը նոյնպէս խաղաղ ու հանգիստ էր, ինչպէս եւ նրա կեանքը: Նրա մարմինը հանգստանում է Դէնգամի գերեզմանատանը, հասարակ շիրմի մէջ. շատերը յարգանքով են յիշում պատկառելի եւ բարի ծերունուն: Պարոն Զօնը, որ բաւականին ծերացել է, մըտաբերելով ծերունի Թոմասին, միշտ կրկնում է.

—Հանգիստ ոսկորներիդ, պատկառելի ծերունի:
Տայ Աստուած, որ իմ կեանքիս վերջն էլ նոյնպէս խաղաղ եւ հանգիստ լինի, ինչպէս քոնը:





ՀՀ Ազգային գրադարան
NL0388967

421